



USAID
FROM THE AMERICAN PEOPLE



ცესკო
საქართველოს ეროვნული
პოლიტიკის ცენტრი



საარჩევნო სისტემების
მანქანათმშენებლობა, რეგულირება და
სწავლების ცენტრი

საუბნო საარჩევნო კომისიის წევრთა სახელმძღვანელო ინსტრუქცია

სერაფიმას ძეგლის ჯანსაღი გზის დასაწყისი ინტერვიუ ჯანსაღი

საქართველოს პარლამენტის
2016 წლის 8 ოქტომბრის არჩევნები

ქვეყნის მთავრობის
2016 წლის 8-ი იანვრის დადგენილება

ՏԵՂԱՍԱՍԱՅԻՆ ԸՆՏՐԱԿԱՆ
ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԱՆԴԱՄՆԵՐԻ
ՈՒՂԵՑՈՒՅՑ ՀՐԱՀԱՆԳ

Հաստատված է ԿԸՀ-ի 2016 թվականի հուլիսի 27-ի N52/2016 որոշմամբ

Ներկայացված Ուղեցույց հրահանգը հատկացված է Վրաստանի Խորհրդարանի 2016 թվականի հոկտեմբերի 8-ի ընտրությունների համար տեղամասային ընտրական հանձնաժողովների անդամների ուսուցման նպատակով: Տեղամասային ընտրական հանձնաժողովի լիազորությունների և գործունեության կարգի հետ կապված օրենսդրական կարգավորումներին ամբողջական տեսքով ծանոթանալու համար տեսե՛ք «Վրաստանի ընտրական օրենսգիրք» Վրաստանի օրգանական օրենքը և ԿԸՀ-ի համապատասխան իրավական ակտերը:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՄԱՍ I. ՏԵՂԱՄԱՍԱՅԻՆ ԸՆՏՐԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԿԱԶՄԸ

ԵՎ ԱՇԽԱՏԵԼՈՒ ԿԱՐԳԸ 7

Գլուխ I. Տեղամասային ընտրական հանձնաժողովի կազմավորման կարգը 8

Տեղամասային ընտրական հանձնաժողովի կազմավորման կարգը 8

Տեղամասային ընտրական հանձնաժողովի անդամի իրավունքներն ու պարտականությունները ... 8

Գլուխ II. Տեղամասային ընտրական հանձնաժողովի աշխատելու կարգը 9

Տեղամասային ընտրական հանձնաժողովի ղեկավար անձանց լիազորությունները 9

Տեղամասային ընտրական հանձնաժողովի գործավարության կարգը 10

Տեղամասային ընտրական հանձնաժողովի նիստին կարգադրությունների ընդունման կարգը 11

Տեղամասային ընտրական հանձնաժողովի ներգրավվածությունը և սահմանափակումները
նախընտրական քարոզչության/քարոզարշավի մեջ 12

ՄԱՍ II. ՏԵՂԱՄԱՍԱՅԻՆ ԸՆՏՐԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ

ՆԱԽԸՆՏՐԱԿԱՆ ՇՐՋԱՆՈՒՄ 13

Գլուխ I. Ընտրողների ցուցակներ 14

Ընտրողների միասնական ցուցակը և նրա հրապարակման կարգը 14

Ընտրողների միասնական ցուցակի տվյալների վերստուգումը 15

Ընտրողների հատուկ ցուցակ 15

Շրջիկ (տեղափոխվող) քվեատուկի ցուցակի ձևավորման կարգը 15

Ընտրողի թերթիկ 17

Գլուխ II. Ընտրական փաստաթղթերի ստացումը, քվեարկության շենքի կազմակերպումը 18

Ընտրատարածքային ընտրական հանձնաժողովից ընտրական փաստաթղթերի,
քվեարկության համար անհրաժեշտ պարագաների և նյութերի ստացումը 18

Ընտրական փաստաթղթերի, անհրաժեշտ պարագաների և նյութերի
հանձնման-ընդունման ակտը 19

Քվեարկության շենքի կահավորումը 20

ՄԱՍ III. ՏԵՂԱՄԱՍԱՅԻՆ ԸՆՏՐԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ

ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆ ՕՐԸ 21

Գլուխ I. Ընտրական տեղամասը բացելը, մինչև քվեարկությունը սկսելն

անցկացվելիք ընթացակարգերը 22

Ընտրական տեղամասը բացելը 22

Քվեարկության շենքում ներկա գտնվելու իրավունք ունեցող անձինք 22

Դիտորդի, ընտրական սուբյեկտի և զանգվածային լրատվամիջոցի
ներկայացուցչի իրավական վիճակը 23

Ընտրական տեղամասը բացվելուց մինչև քվեարկության սկսվելն անցկացվելիք
ընթացակարգերը 24

Գլուխ II. Քվեարկության գործընթացը 31

Քվեարկության անցկացումը 31

Քվեարկության օրը կարգուկանոնի պահպանումը քվեարկության շենքում
և նրա հարող տարածքում 37

Քվեարկության գործընթացի ժամանակավոր ընդհատումը	38
Քվեարկությանը մասնակցած ընտրողների հաշվառումը	38
Շրջիկ (տեղափոխվող) քվեատուլի միջոցով քվեարկումը	39

Գլուխ III. Ընտրական տեղամասը փակելը, քվեարկության արդյունքների ամփոփումը 41

Ընտրական տեղամասը փակելը	41
Ընտրական տեղամասի կազմակերպումը՝ ձայները հաշվելու գործընթացի համար	41
Մինչև քվեատուլի բացելն անցկացվելիք ընթացակարգերը	44
Ընտրողների ցուցակների, վսասված և չօգտագործված ընտրական քվեաթերթիկների գմասակնքումը	44
Շրջիկ (տեղափոխվող) քվեատուլի բացելը	45
Հիմնական քվեատուլի բացելը	46
Ընտրական քվեաթերթիկների տեսակավորումը	47
Ընտրական քվեաթերթիկները հաշվելը	48
Ընտրական քվեաթերթիկների գմասակնքումը	49
Քվեարկության արդյունքների ամփոփիչ արձանագրությունների կազմումը	50
Քվեարկության արդյունքների ամփոփիչ արձանագրության հրապարակայնությունը	51
Գրանցամատյանի փակելը, քվեարկության օրվա գործավարության մատյանի գմասակնքումը, ընտրական փաստաթղթերի փոխանցումը ընտրատարածքային ընտրական հանձնաժողովին	51

ՄԱՍ IV. ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆ ՕՐՎԱ ԴԻՄՈՒՄՆԵՐԸ/ԲՈՂՈՔՆԵՐԸ 53

Գլուխ I. Քվեարկության օրվա դիմումների/բողոքների գրանցումը 54

Քվեարկության օրվա դիմումներում/բողոքներում անճշտությունների որոշման կարգը	54
---	----

ԳԼՈՒԽ II. ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆ ՕՐՎԱ ԴԻՄՈՒՄՆԵՐԻՆ/ԲՈՂՈՔՆԵՐԻՆ ԱՐՁԱԳԱՆՔՈՒՄԸ 56

ՀԱՎԵԼՎԱԾ №1. Ընտրական վարչության պաշտոնյաների Էթիկայի կանոնագիրքը. 57

ՀԱՎԵԼՎԱԾ №2. Ընտրական հանձնաժողով ներկայացված դիմումի/բողոքի ռեկվիզիտները 59

ՀԱՎԵԼՎԱԾ №3. Տեղեկանք՝ դիմումի/բողոքի գրանցման վերաբերյալ 60

ՀԱՎԵԼՎԱԾ №4. Տեղամասային ընտրական հանձնաժողովի նախագահի լիազորությունները 61

ՀԱՎԵԼՎԱԾ №5. Տեղամասային ընտրական հանձնաժողովի քարտուղարի լիազորությունները քվեարկության օրը 69

ՀԱՎԵԼՎԱԾ №6. Հանձնաժողովի՝ ընտրողների հոսքը կարգավորող անդամի գործառույթները 73

ՀԱՎԵԼՎԱԾ №7. Հանձնաժողովի՝ ընտրողների գրանցումն իրականացնող անդամի գործառույթները 74

ՀԱՎԵԼՎԱԾ №8. Հանձնաժողովի՝ շրջիկ (տեղափոխվող) քվեատուլի տանող անդամի գործառույթները 76

ՀԱՎԵԼՎԱԾ №9. Հանձնաժողովի՝ քվեատուլի և հատուկ ծրարները հսկող անդամի գործառույթները 78

ՀԱՎԵԼՎԱԾ №10. Լուսանկարահանումը և տեսանկարահանումը ընտրատեղամասում 79

ՄԱՍ I

ՏԵՂԱՄԱՍԱՁՅԻՆ ԸՆՏՐԱԿԱՆ
ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԿԱԶՄԸ ԵՎ
ԱՇԽԱՏԵԼՈՒ ԿԱՐԳԸ

ԳԼՈՒԽ I. ՏԵՂԱՄԱՍԱՅԻՆ ԸՆՏՐԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԿԱԶՄԱՎՈՐՄԱՆ ԿԱՐԳԸ

ՏԵՂԱՄԱՍԱՅԻՆ ԸՆՏՐԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԿԱԶՄԱՎՈՐՄԱՆ ԿԱՐԳԸ

Տեղամասային ընտրական հանձնաժողովը բաղկացած է 13 անդամից
(Ընտրական օրենսգիրք՝ հոդված 24.1,2,4. հոդված 29.9)

- ▶ 6 անդամ մրցույթի հիման վրա ընտրվում է ընտրատարածքային ընտրական հանձնաժողովի կողմից,
- ▶ 7 անդամ նշանակվում է կուսակցությունների կողմից:

Արգելվում է տեղամասային ընտրական հանձնաժողովի անդամին ետ կանչել քվեարկության օրվանից 15 օր առաջ (23 սեպտեմբերի):

ՈՒՇԱԴՐՈՒԹՅՈՒՆ

- ▶ Ընտրական հանձնաժողովի անդամն իրեն նշանակող/ընտրող սուբյեկտի ներկայացուցիչը չէ: Նա իր գործունեության մեջ ազատ է և ենթարկվում է միայն Վրաստանի Սահմանադրությանը, Օրենքին և համապատասխան իրավական ակտերին **(Ընտրական օրենսգիրք՝ հոդված 8.21):**

ՏԵՂԱՄԱՍԱՅԻՆ ԸՆՏՐԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԱՆԴԱՄԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐՆ ՈՒ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

(Տեղամասային ընտրական հանձնաժողովի կանոնակարգ՝ հոդված 5)

Տեղամասային ընտրական հանձնաժողովի անդամը պարտավոր է համապատասխան հանձնաժողովի անդամ նշանակվելու/ընտրվելու պահից.

- ▶ մասնակցել հանձնաժողովի ամենօրյա գործունեությանը,
- ▶ մասնակցել հանձնաժողովի անդամների որակավորման բարձրացման նպատակով Վրաստանի ընտրական վարչության/ուսումնական կենտրոնի կողմից կազմակերպված դասընթացներին և վարժանք/աշխատաժողովներին,
- ▶ կանոնավոր կերպով մասնակցել հանձնաժողովի նիստերին և մասնակցել հանձնաժողովի կողմից իրականացվելիք ընտրական միջոցառումներին,
- ▶ նիստից հարգելի պատճառով բացակայելու դեպքում տեղեկացնել այդ մասին հանձնաժողովի նախագահի տեղակալին կամ հանձնաժողովի քարտուղարին,
- ▶ ժամանակին կատարել հանձնաժողովի նախագահի կողմից հանձնարարված պարտականությունները:

ՈՒՇԱԴՐՈՒԹՅՈՒՆ

Տեղամասային ընտրական հանձնաժողովի անդամների կողմից տվյալ հանձնարարությունները չկատարելը վերադաս ընտրական հանձնաժողովի կողմից կարող է քննարկվել որպես կարգապահական խախտում և դառնալ նրա հանդեպ կարգապահական պատասխանատվության կիրառման հիմք:

Գլուխ II. ՏԵՂԱՄԱՍԱՅԻՆ ԸՆՏՐԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԱՇԽԱՏԵԼՈՒ ԿԱՐԳԸ

ՏԵՂԱՄԱՍԱՅԻՆ ԸՆՏՐԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԴԵԿԱՎԱՐ ԱՆՁԱՆՑ ԼԻԱԶՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Տեղամասային ընտրական հանձնաժողովի ղեկավար անձինք են.

(Ընտրական օրենսգիրք՝ հոդված 25.1).

- ▶ հանձնաժողովի նախագահը,
- ▶ հանձնաժողովի նախագահի տեղակալը,
- ▶ հանձնաժողովի քարտուղարը:

Տեղամասային ընտրական հանձնաժողովի նախագահը

(Ընտրական օրենսգիրք՝ հոդված 27.1).

- ▶ իրավիրում է և վարում հանձնաժողովի նիստը,
- ▶ ընդունում է և բաժանում հանձնաժողովի մտից ընտրական փաստաթղթերը և գրագրությունը,
- ▶ անձամբ է պատասխանատու ընտրական փաստաթղթերի և գույքի պահպանման/տրամադրման համար,
- ▶ հանձնարարություն է տալիս հանձնաժողովի նախագահի տեղակալին, հանձնաժողովի քարտուղարին և հանձնաժողովի այլ անդամներին,
- ▶ քվեարկության օրը կազմակերպում է հանձնաժողովի անդամների միջև գործառույթների վիճակահանությամբ բաշխումը,
- ▶ պատասխանատու է ընտրական տեղամասի շենքում և հարող տարածքում կարգուկանոնի պահպանման համար,
- ▶ պարտավոր է արգելել մուտքը քվեարկության շենք՝ այստեղ գտնվելու իրավունք ունեցող այն անձանց, ովքեր չունեն համապատասխան կրծքանշանը,
- ▶ քվեարկության արդյունքներն ամփոփելուն պես, վերադաս ընտրատարածքային ընտրական հանձնաժողովին է փոխանցում բոլոր տեսակի ընտրական փաստաթղթերը,
- ▶ իրականացնում է սույն Օրենքով շնորհված այլ լիազորություններ:

Տեղամասային ընտրական հանձնաժողովի նախագահի տեղակալը

(Ընտրական օրենսգիրք՝ հոդված 27.2).

- ▶ կատարում է հանձնաժողովի նախագահի պարտականությունը, եթե հանձնաժողովը չունի նախագահ, կամ նախագահը չի կարող կատարել իր պարտականությունը,
- ▶ հանձնաժողովի նախագահի կարգադրությամբ իրականացնում է հանձնաժողովի նախագահի որոշակի լիազորություններ (կարգադրությամբ ճշգրիտ կերպով պետք է սահմանվեն շնորհված լիազորությունների շրջանակները և ժամկետը):

Տեղամասային ընտրական հանձնաժողովի քարտուղարը

(Ընտրական օրենսգիրք՝ հոդված 27.3).

- ▶ պատրաստում է հանձնաժողովի նիստի օրակարգը և կարգադրությունների նախագծերը,
- ▶ պատասխանատու է հանրային տեղեկատվության տրամադրման համար,
- ▶ կազմում է հանձնաժողովի նիստերի արձանագրությունները, այդ թվում՝ քվեարկության արդյունքների ամփոփիչ արձանագրությունը,
- ▶ իրականացնում է սույն Օրենքով շնորհված այլ լիազորություններ:

Տեղամասային ընտրական հանձնաժողովի նիստը բաց է: Տեղամասային ընտրական հանձնաժողովի նիստին ներկա գտնվելու իրավունք ունեն

(Ընտրական օրենսգիրք՝ հոդված 8.15).

- ▶ ԿԸՀ-ի և ընտրատարածքային ընտրական հանձնաժողովի անդամները,
- ▶ ԿԸՀ-ի և ընտրատարածքային ընտրական հանձնաժողովի ներկայացուցիչները,
- ▶ ԿԸՀ-ի աշխատակազմի աշխատակիցները,
- ▶ համապատասխան ընտրական հանձնաժողովում հավատարմագրված լրատվամիջոցների ներկայացուցիչները,
- ▶ համապատասխան ընտրական հանձնաժողովում ընտրական սուբյեկտների մեկական ներկայացուցիչ,
- ▶ տեղական դիտորդ կազմակերպությունների համապատասխան հանձնաժողովում գրանցված մեկական դիտորդ,
- ▶ միջազգային կազմակերպությունների մեկական դիտորդ (թարգմանչի հետ):

Տեղամասային ընտրական հանձնաժողովն իրավունք ունի, կարգուկանոնը խախտելու և հանձնաժողովի աշխատանքին խանգարելու դեպքում, կարգուկանոնը խախտողին ազատել նիստի դահլիճից, ինչը նշվում է նիստի արձանագրության մեջ (Ընտրական օրենսգիրք՝ հոդված 8.15):

ՏԵՂԱՄԱՍԱՅԻՆ ԸՆՏՐԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԳՈՐԾԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԿԱՐԳԸ

(Տեղամասային ընտրական հանձնաժողովի կանոնակարգ՝ հոդված 11)

Տեղամասային ընտրական հանձնաժողովում վարում են գրանցամատյան, որը լրացնելու համար պատասխանատու է հանձնաժողովի քարտուղարը:

Գրանցամատյանը բաղկացած է երկու մասից.

I. Մտից փաստաթղթեր

Հանձնաժողովի քարտուղարը պարտավոր է, փաստաթուղթ/դիմում ստանալիս, գրանցամատյանում գրանցել մտից փաստաթուղթ/դիմումը:

ՈՒՇԱԴՐՈՒԹՅՈՒՆ

Փաստաթուղթը/դիմումը ընդունելուց և գրանցամատյանում համապատասխանաբար գրանցելուց հետո, հանձնաժողովի քարտուղարը պարտավոր է տրամադրել տեղեկանք, որում նշվում է փաստաթղթի/դիմումի ընդունման ամսաթիվը, ամիսը, տարեթիվը և ճշգրիտ ժամանակը, նաև՝ մատյանում դրան շնորհված գրանցման համարը: Տվյալ տեղեկանքը հանձնաժողովի քարտուղարը պետք է վավերացնի ստորագրությամբ (*Տեղամասային ընտրական հանձնաժողովի կանոնակարգ՝ հոդված 11.5*):

II. Ելից փաստաթղթեր

Հանձնաժողովի քարտուղարը պարտավոր է փաստաթղթի տրամադրումը գրանցել գրանցամատյանի ելից փաստաթղթերի բաժնում:

Գրանցամատյանը փակվում է յուրաքանչյուր օրվա ժամը 18:00-ին, բացառությամբ քվեարկության օրվա: Գրանցամատյանի երկու մասերում էլ, վերջին գրանցումից հետո, գրվում է՝ «Գրանցամատյանը փակված է» և նշվում է փակման ամսաթիվը, ամիսը, տարեթիվը և ճշգրիտ ժամանակը: Այս նշումը հանձնաժողովի քարտուղարը վավերացնում է ստորագրությամբ: Գրանցամատյանը փակելուց հետո արգելվում է նույն ամսաթվով լրացուցիչ գրանցել որևէ փաստաթուղթ (*Տեղամասային ընտրական հանձնաժողովի կանոնակարգ՝ հոդված 11.15*):

ՈՒՇԱԴՐՈՒԹՅՈՒՆ

Քվեարկության օրը գրանցամատյանը վարում են ողջ ընտրական գործընթացին զուգահեռ: Քվեարկության օրվա բոլոր ընթացակարգերն ավարտվելուց և համապատասխան ընտրական փաստաթղթերի գրանցումից հետո գրանցամատյանը փակվում է հանձնաժողովի քարտուղարի և նախագահի ստորագրություններով և վավերացվում է տեղամասային ընտրական հանձնաժողովի կնիքով:

ՏԵՂԱՄԱՍԱՅԻՆ ԸՆՏՐԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԻՍՏԻՆ ԿԱՐԳԱԴՐՈՒԹՅԱՆ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

Տեղամասային ընտրական հանձնաժողովի կարգադրության նախագիծը պատրաստում է հանձնաժողովի քարտուղարը (*Տեղամասային ընտրական հանձնաժողովի կանոնակարգ՝ հոդված 9.4*): Հանձնաժողովի կարգադրությունն ընդունված է համարվում, եթե նրան կողմ է քվեարկել հանձնաժողովի նիստին ներկա գտնվողների մեծ մասը, սակայն ոչ պակաս, քան հանձնաժողովի լրիվ կազմի մեկ երրորդը (ոչ պակաս, քան 5 անդամ): Ձայների հավասար բաշխման դեպքում որոշիչ է համարվում հանձնաժողովի նիստի նախագահի ձայնը (*Ընտրական օրենսգիրք՝*

հոդված 8.4-5):

Տեղամասային ընտրական հանձնաժողովի կարգադրությունը ստորագրում են հանձնաժողովի նիստի նախագահը և հանձնաժողովի քարտուղարը: Հանձնաժողովի կարգադրությունը հենց հաջորդ օրը փակցվում է ընտրական տեղամասում (Ընտրական օրենսգիրք՝ հոդված 26.3, հոդված 30.4, Տեղամասային ընտրական հանձնաժողովի կանոնակարգ՝ հոդված 6.4):

ՏԵՂԱՄԱՍԱՅԻՆ ԸՆՏՐԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԵՐԳՐԱՎԱԾՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՍԱՀՄԱՆԱՓԱԿՈՒՄՆԵՐԸ ՆԱԽԸՆՏՐԱԿԱՆ ՔԱՐՈՉՉՈՒԹՅԱՆ/ՔԱՐՈՉԱՐՇԱԿԻ ՄԵՋ

Տեղամասային ընտրական հանձնաժողովը քվեարկության շենքում, բոլորի համար տեսանելի տեղում փակցնում է թեկնածուների ցուցակները և կուսակցական ցուցակները (Ընտրական օրենսգիրք՝ հոդված 58.4.դ, Տեղամասային ընտրական հանձնաժողովի կանոնակարգ՝ հոդված 8.2.գ):

ՈՒՇԱԴՐՈՒԹՅՈՒՆ

Ընտրական հանձնաժողովի անդամին արգելվում է մասնակցել ընտրական քարոզչությանը (Ընտրական օրենսգիրք՝ հոդված 45.4.ա):

ՄԱՍ II

ՏԵՂԱՄԱՍԱՅԻՆ ԸՆՏՐԱԿԱՆ
ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ
ԳՈՐԾՈՒՆԵՌՈՒԹՅՈՒՆԸ
ՆԱԽԸՆՏՐԱԿԱՆ ՇՐՋԱՆՈՒՄ

Գլուխ I. ԸՆՏՐՈՂՆԵՐԻ ՑՈՒՑԱԿՆԵՐ

ԸՆՏՐՈՂՆԵՐԻ ՄԻԱՍՆԱԿԱՆ ՑՈՒՑԱԿԸ ԵՎ ՆՐԱ ՀՐԱՊԱՐԱԿՄԱՆ ԿԱՐԳԸ

(Ընտրական օրենսգիրք՝ հոդված 31)

Ընտրողների ընդհանուր ցուցակի մեջ ընդգրկվում են ընտրողի մասին հետևյալ տվյալները.

- ▶ ազգանուն, անուն,
- ▶ ծննդյան ամսաթիվ, ամիս, տարեթիվ,
- ▶ հասցեն (ըստ Վրաստանի քաղաքացու ինքնությունը հավաստող վկայականի կամ Պետական ծառայությունների զարգացման գործակալության տվյալների բազայի),
- ▶ Վրաստանի քաղաքացու անձնական համարը,
- ▶ փաստացի բնակման վայրը (Վրաստանի բռնազավթված տարածքից հարկադրաբար վերաբնակեցված անձի, առանց հասցեի նշման հաշվառված անձի համար, ըստ բնակման վայրի հաշվառումից հանված անձի, նաև այն անձի համար, որի հաշվառումը ուժը կորցրած է հայտարարված, Պետական ծառայությունների զարգացման գործակալության որոշմամբ, նշվում է ժամանակավոր բնակման հասցեն, ուրիշ պետությունում գտնվող անձի համար նշվում է՝ «Հյուպատոսական հաշվառման է», իսկ եթե նման անձը չի վերցված հյուպատոսական հաշվառման՝ «Գտնվում է արտասահմանում»),
- ▶ ընտրողների ընդհանուր ցուցակի մեջ հաշվառման ամսաթիվը, ամիսը, տարեթիվը,
- ▶ լուսանկար (Պետական ծառայությունների զարգացման գործակալության տվյալների էլեկտրոնային բազայում եղած ամենանոր լուսանկարը՝ թվանշանային տարբերակով),
- ▶ սեռը:

Տեղամասային ընտրական հանձնաժողովին մինչև քվեարկությունը, ոչ ուշ, քան երկու օր առաջ (6 հոկտեմբերի) փոխանցվում են ընտրողների ճշտված ցուցակների վերջնական տարբերակները.

- ▶ ընտրական հանձնաժողովի համար հատկացված տարբերակը (սեղանին դնելու ցուցակ),
- ▶ հանրային տեղեկատվության համար հատկացված տարբերակը (պատին փակցնելու ցուցակ):

ՈՒՇԱԴՐՈՒԹՅՈՒՆ

- ▶ Պատին փակցնելու ցուցակի նախնական տարբերակը պետք է հանվի և նույն տեղում փակցվի ճշգրտված տարբերակը:
- ▶ Թույլ չի տրվում սեղանի ցուցակը և նրա պատճենը տրամադրել հանրային տեղեկության տեսքով:

ԸՆՏՐՈՂՆԵՐԻ ՄԻԱՍՆԱԿԱՆ ՑՈՒՑԱԿՆԵՐԻ ՏՎՅԱԼՆԵՐԻ ՎԵՐՍՏՈՒԳՈՒՄԸ

(Ընտրական օրենսգիրք՝ հոդված 26.2.բ)

Տեղամասային ընտրական հանձնաժողովը.

- ▶ ստուգում է ընտրողների միասնական ցուցակի ճշգրտությունը. սխալների և անճշտությունների հայտնաբերման դեպքում, ոչ ուշ, քան հաջորդ օրը, սակայն ոչ ուշ, քան ընտրությունների օրվանից 16 օր առաջ (22 սեպտեմբերի), ցուցակում փոփոխություն ընդգրկելու մասին առաջարկով դիմում է ընտրատարածքային ընտրական հանձնաժողովին,
- ▶ ընտրողների ցուցակների հետ կապված մտից դիմումներն անհապաղորեն փոխանցում է ընտրատարածքային ընտրական հանձնաժողովին:

ԸՆՏՐՈՂՆԵՐԻ ՀԱՏՈՒԿ ՑՈՒՑԱԿ

(Ընտրական օրենսգիրք՝ հոդված 32)

Ընտրողների հատուկ ցուցակը կազմում է ընտրատարածքային ընտրական հանձնաժողովը, ոչ ուշ, քան քվեարկության օրվանից 3 օր առաջ (5 հոկտեմբերի) և փոխանցում համապատասխան տեղամասային ընտրական հանձնաժողովին:

Եթե քվեարկության օրը, ընտրություններին մասնակցելու խնդրանքով, տեղամասային ընտրական հանձնաժողովին դիմում է ընտրող, որն ընտրությունների օրվանից ոչ ուշ, քան 16 օր առաջ (22 սեպտեմբերի) չի հասցրել դիմել հանձնաժողովին՝ ցուցակում հաշվառման պահանջով (ժամանել է արտասահմանից, դուրս է գրվել հիվանդանոցից, ազատվել է ազատազրկման հաստատությունից), համապատասխան փաստաթղթերի (սահմանի հատման մասին գրառում անձնագրում, տեղեկանք ստացիոնար բուժհաստատությունից, տեղեկանք ազատազրկման հաստատությունից ազատվելու վերաբերյալ) ներկայացման դեպքում նրան հատուկ ցուցակում կհաշվառի տեղամասային ընտրական հանձնաժողովը և ընտրողների ցուցակին կկցի ներկայացված փաստաթղթերի ֆոտոպատճենները (Ընտրական օրենսգիրք՝ հոդված 31.12):

ՇՐՋԻԿ (ՏԵՂԱՓՈԽՎՈՂ) ԶՎԵԱՏՈՒՓԻ ԿԱԶՄԱՎՈՐՄԱՆ ԿԱՐԳԸ

(Ընտրական օրենսգիրք՝ հոդվածներ 33-34)

Շրջիկ (տեղափոխվող) քվեատուփի ցուցակի ձևավորման համար պատասխանատու է տեղամասային ընտրական հանձնաժողովը: Շրջիկ (տեղափոխվող) քվեատուփի ցուցակը կազմվում է ընտրողների միասնական և հատուկ ցուցակների հիման վրա:

Ընտրողին շրջիկ (տեղափոխվող) քվեատուփի ցուցակի մեջ ընդգրկում են, եթե.

- ▶ առողջական վիճակի պատճառով չի կարող գնալ քվեարկության շենք (նման ընտրողների թիվը չպետք է գերազանցի ընտրական տեղամասում ընտրողների ընդհանուր ցուցակի մեջ առկա ընտրողների 3 տոկոսը: Նշված քանակը լրանալուց հետո տեղամասային ընտրական հանձնաժողովի նախագահը պար-

տավոր է յուրաքանչյուր նոր մտից դիմումի մասին անհապաղորեն տեղեկացնել ընտրատարածքային ընտրական հանձնաժողովին և սպասել համապատասխան ցուցումների),

- ▶ գտնվում է ընտրական տեղամասի տարածքում, սակայն դժվար հասանելի վայրում (այսպիսի դեպքում երաշխավորվում է խորհրդատվություն անցնել ընտրատարածքային ընտրական հանձնաժողովի մոտ),

ՈՒՇԱԴՐՈՒԹՅՈՒՆ

Շրջիկ (տեղափոխվող) քվեատուլի միջոցով քվեարկելու պահանջով ընտրողը տեղամասային ընտրական հանձնաժողովին գրավոր կամ հեռախոսային հաղորդագրությամբ դիմում է քվեարկության օրվանից գոնե 2 օր առաջ (5 հոկտեմբերի): Հանձնաժողովի քարտուղարը գրանցամատյանում գրանցում է ընտրողի գրավոր դիմումը կամ հեռախոսային բանավոր հայտարարությունը և նշում հեռախոսային հաղորդագրությունը ստանալու ճշգրիտ ժամանակը, հեռախոսահամարը, ընտրողի անունը, ազգանունը, անձնական համարը և այն հասցեն, ուր ընտրողը պահանջում է տանել շրջիկ (տեղափոխվող) քվեատուլի: Եթե այդ հասցեն դուրս է այն ընտրական տեղամասի տարածքի սահմաններից, որտեղ հաշվառված է ընտրողը, նրան պարզաբանում են, որ ինքը չի ընդգրկվում շրջիկ (տեղափոխվող) քվեատուլիով քվեարկողների ցուցակի մեջ:

- ▶ բուժման նպատակով պառկած է հիվանդանոցում կամ այլ ստացիոնար բուժհաստատությունում, և այդտեղ չի բացվում ընտրական տեղամաս (քվեարկության օրը ստացիոնար բուժհաստատությունում գտնվող ընտրողի մասին տեղեկությունը ընտրատարածքային ընտրական հանձնաժողովը քվեարկության օրվանից ոչ ուշ, քան 2 օր առաջ փոխանցում է տեղամասային ընտրական հանձնաժողովին),
- ▶ գտնվում է վարչական կալանքի մեջ,
- ▶ գտնվում է կալանքի մեջ,
- ▶ զինծառայող է, ծառայում է պետական սահմանի վրա տեղակայված զորամասում, որը ընտրատեղամասից հեռու է գտնվում,
- ▶ ծառայում է Վրաստանի պատիժների իրականացման և պրոբացիայի նախարարության բժշկական դեպարտամենտում, պատիժների իրականացման դեպարտամենտում կամ պատիժների իրականացման հաստատությունում և աշխատանքային պայմանների պատճառով չի կարող լքել աշխատատեղը,
- ▶ Վրաստանի պաշտպանության նախարարության, Վրաստանի ներքին գործերի նախարարության, Վրաստանի պատիժների իրականացման և պրոբացիայի նախարարության, Վրաստանի պետական անվտանգության նախարարության, Վրաստանի հետախուզական ծառայության և Պետական պաշտպանության հատուկ ծառայության զինծառայող է կամ հատուկ կոչում ունեցող անձ և քվեարկության շրջանում առանձնահատուկ ծառայողական պայմանների կամ առողջական վիճակի պատճառով չի կարող հեռանալ աշխատատեղից:

Շրջիկ (տեղափոխվող) քվեատուլի ցուցակի մեջ (սեղանի ցուցակի մեջ) ընդգրկվում են ընտրողի մասին նույն տվյալները, որոնք կան ընտրողների ընդհանուր ցուցակի մեջ, բացառությամբ նրա լուսանկարի, և լրացուցիչ նշվում է նրա ցուցակային համարը ընտրողների միասնական կամ հատուկ ցուցակում (*Ընտրական օրենսգիրք` հոդված 33.5*):

Շրջիկ (տեղափոխվող) քվեատուլի ցուցակի հանրային տեղեկատվության համար հատկացված տարբերակը (պատի ցուցակը, որն ընդգրկում է շարժական քվեատուլի ցուցակի սեղանի տարբերակի տվյալները, բացառությամբ ընտրողի անհատական համարի), այն կազմելուն պես, փակցվում է քվեարկության շենքում, բոլորի համար տեսանելի տեղում:

Շրջիկ (տեղափոխվող) քվեատուլի ցուցակի մեջ ընտրողին ընդգրկելուն պես, ընտրողների միասնական և հատուկ ցուցակներում նրա ազգանվան դիմաց, «Փաստացի վիճակը» սյունակում պետք է արվի գրառում՝ «Շրջիկ (տեղափոխվող) քվեատուլի»:

ՈՒՇԱՂԴՈՒԹՅՈՒՆ

- ▶ Շրջիկ (տեղափոխվող) քվեատուլի ցուցակը (պատի և սեղանի) վավերացվում է տեղամասային ընտրական հանձնաժողովի նախագահի և հանձնաժողովի քարտուղարի ստորագրություններով:
- ▶ Շրջիկ (տեղափոխվող) քվեատուլի ցուցակում ընդգրկվելիք ընտրողների մասին տեղեկությունն անհապաղորեն պետք է փակցվի ընտրական տեղամասում, բոլորի համար տեսանելի տեղում:
- ▶ Տեղամասային ընտրական հանձնաժողովի անդամները, ընտրական սուբյեկտների ներկայացուցիչները և դիտորդներն իրավունք ունեն վերստուգել շարժական քվեատուլի միջոցով քվեարկում պահանջելու հիմնավոր լինելը, և մինչև ընտրությունների օրը, ցանկացած ժամանակ տեղամասային ընտրական հանձնաժողովին ներկայացնել համապատասխան անձանց շրջիկ (տեղափոխվող) քվեատուլի ցուցակում ընդգրկելու նպատակահարմարության հարցը: Տվյալ հարցի հետ կապված որոշումն ընդունում է տեղամասային ընտրական հանձնաժողովը: (Ընտրական օրենսգիրք՝ հոդված 33.3)

ԸՆՏՐՈՂԻ ԹԵՐԹԻԿ

(Ընտրական օրենսգիրք՝ հոդված 35)

Տեղամասային ընտրական հանձնաժողովը իրավագոր է քվեարկության օրվանից ոչ ուշ, քան 2 օր առաջ (6 հոկտեմբերի) ընտրական տեղամասի տարածքում հաշվառված և ընտրողների ընդհանուր ցուցակի մեջ ընդգրկված բոլոր ընտրողներին փոխանցել ընտրատարածքային ընտրական հանձնաժողովից ստացած ընտրողների թերթիկները:

Տեղամասային ընտրական հանձնաժողովի անդամները հանձնաժողովի քարտուղարին պետք է վերադարձնեն այն ընտրողների թերթիկները, որոնք չեն կարողացել բաժանել ընտրողներին:

ՈՒՇԱՂԴՈՒԹՅՈՒՆ

Ընտրողի թերթիկ չստանալը քվեարկության մասնակցելու իրավունքի սահմանափակման հիմք չէ:

Գլուխ II. ԸՆՏՐԱԿԱՆ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ ՍՏԱՑՈՒՄԸ, ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆ ՇԵՆՔԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ

ԸՆՏՐԱՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԸՆՏՐԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻՑ ԸՆՏՐԱԿԱՆ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ, ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ ԱՆՀՐԱԺԵՇՏ ՊԱՐԱԳԱՆԵՐԻ ԵՎ ՆՅՈՒԹԵՐԻ ՍՏԱՑՈՒՄԸ

Տեղամասային ընտրական հանձնաժողովը քվեարկության նախապատրաստման և նրա անցկացման նպատակով ընտրատարածքային ընտրական հանձնաժողովից ստանում է.

Ընտրական փաստաթղթեր.

- ▶ միասնական ընտրացուցակի վեջնական տարբերակը (պատի և սեղանի),
- ▶ հատուկ ընտրացուցակ (պատի և սեղանի),
- ▶ շրջիկ (տեղափոխվող) քվեատուլիի ցուցակի (պատի և սեղանի) ձևաթղթեր,
- ▶ ընտրողների թերթիկներ,
- ▶ ընտրական քվեաթերթիկների նոթատետրեր,
- ▶ հատուկ ծրարներ,
- ▶ քվեարկության օրվա գործավարության մատյանը (այսպես կոչված թելակարված գիրք),
- ▶ ստուգողական թերթեր,
- ▶ քվեարկության արդյունքների ամփոփիչ արձանագրություններ և ուղղումներ անելու արձանագրության ձևաթղթեր,
- ▶ քվեարկության արդյունքների ցուցադրական արձանագրություններ:

Ընտրությունների անցկացման համար անհրաժեշտ պարագաներ.

- ▶ հիմնական և շրջիկ (տեղափոխվող) թափանցիկ քվեատուլիեր,
- ▶ քվեատուլիերի կնիքներ,
- ▶ քվեարկության խցիկներ,
- ▶ նշմարման հեղուկ և նշմարումը ստուգող հատուկ սարք (ուլտրամանուշակագույն լապտեր),
- ▶ տեղամասային ընտրական հանձնաժողովի կնիքը,
- ▶ գրանցումն իրականացնողների կնիքները,
- ▶ պատճենահան մեքենա,
- ▶ թանաքի բարձիկներ:

Ընտրությունների անցկացման համար անհրաժեշտ այլ նյութեր

- ▶ թեկնածուների ցուցակներ,
- ▶ կուսակցական ցուցակներ,

- ▶ ընտրական քվեաթերթիկների լրացման հրահանգ,
- ▶ քաղվածք Օրենքից, թե որ դեպքում է ընտրական քվեաթերթիկն անվավեր,
- ▶ ընտրական փաստաթղթերի փաթեթավորման ծրարներ:

ՈՒՇԱԴՐՈՒԹՅՈՒՆ

Ընտրատարածքային ընտրական հանձնաժողովը ընտրական քվեաթերթիկները և հատուկ ծրարները քվեարկությունը սկսվելուց ոչ ուշ, քան 12 ժամ առաջ փոխանցում է տեղամասային ընտրական հանձնաժողովներին (Ընտրական օրենսգիրք՝ հոդված 63.9):

ԸՆՏՐԱԿԱՆ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ, ՔՎԵԱԴՐՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ ԱՆՀՐԱԺԵՇՏ ԴԱՐԱԳԱՆԵՐԻ ԵՎ ՆՅՈՒԹԵՐԻ ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՄԱՆ ԱԿՏԸ

Հանձնաժողովի նախագահը, կամ հանձնաժողովի նախագահի կարգադրության հիման վրա՝ նախագահի տեղակալը, ընտրատարածքային ընտրական հանձնաժողովից ընտրական փաստաթղթեր ստանալու համար պատասխանատու անձն է, իսկ ընտրական փաստաթղթերի պահպանման և ըստ նշանակման տրամադրման համար պատասխանատու անձինք են տեղամասային ընտրական հանձնաժողովի նախագահը և հանձնաժողովի քարտուղարը (Ընտրական օրենսգիրք՝ հոդված 27.1.դ, հոդված 63.6):

Հանձնման-ընդունման ակտը ստորագրում են ընտրական փաստաթղթերը հատկացնող և ընդունող անձինք (Ընտրական օրենսգիրք՝ հոդված 63.10): Հանձնման-ընդունման ակտը տեղամասային ընտրական հանձնաժողովի քարտուղարը գրանցում է գրանցամատյանի մտից փաստաթղթերի բաժնում:



ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆ ՇԵՆՔԻ ԿԱՅԱՎՈՐՈՒՄԸ

Տեղամասային ընտրական հանձնաժողովի անդամները պարտավոր են, քվեարկության ընթացակարգերի անցկացման նպատակով, Օրենքով սահմանված կանոնների պահպանմամբ, քվեարկության սկզբից առնվազն մեկ օր առաջ կահավորել քվեարկության շենքը: **Տեղամասային ընտրական հանձնաժողովը պետք է կահավորի (Ընտրական օրենսգիրք՝ հոդված 58.4.ա–գ).**

- ▶ ընտրողների գրանցման սեղանները,
- ▶ յուրաքանչյուր 500 ընտրողի համար առնվազն մեկ քվեախցիկ, որտեղ պետք է լինի մեկ գրիչ,
- ▶ սեղան՝ հատուկ ծրարների համար (պետք է դրված լինի քվեատուփին մոտ),
- ▶ սարքին, չկնքված քվեատուփեր:

Քվեարկության շենքում թափանցիկ քվեատուփը բոլորի համար տեսանելի տեղում այնպես պետք է լինի տեղադրված, որ ընտրողն, առանց խոչընդոտի, մոտենա նրան և հատուկ ծրարը նրա մեջ գցելուց հետո, անհապաղորեն հեռանա ընտրատեղամասից:

Քվեարկության շենքում բոլորի համար տեսանելի տեղում պետք է փակցված լինի (Ընտրական օրենսգիրք՝ հոդված 58.4.դ, 58.5).

- ▶ միասնական ընտրացուցակի հանրային տեղեկատվության համար հատկացված տարբերակը (պատի ցուցակ),
- ▶ հատուկ ընտրացուցակի (այսպիսինի գոյության դեպքում) հանրային տեղեկատվության համար հատկացված տարբերակը (պատի ցուցակ),
- ▶ շրջիկ (տեղափոխվող) քվեատուփի (այսպիսինի գոյության դեպքում) հանրային տեղեկատվության համար հատկացված տարբերակը (պատի ցուցակ),
- ▶ թեկնածուների ցուցակները,
- ▶ կուսակցական ցուցակները,
- ▶ ԿԸՀ-ի կողմից սահմանված՝ ընտրական քվեաթերթիկների լրացման կարգը,
- ▶ քաղվածք Օրենքից, թե որ դեպքում է ընտրական քվեաթերթիկն անվավեր,
- ▶ քվեարկության արդյունքների ցուցադրական արձանագրությունները:

ՈՒՇԱԴՐՈՒԹՅՈՒՆ

Եթե ընտրական քվեաթերթիկի մեջ ներառված որևէ ընտրական սուբյեկտ այլևս չի մասնակցում ընտրություններին, այդ մասին հայտարարություն պետք է փակցվի բոլորի համար մասնակցում տեղում՝ քվեարկության շենքում և գաղտնի քվեախցիկներում:

ՄԱՍ III

ՏԵՂԱՄԱՍԱՅԻՆ ԸՆՏՐԱԿԱՆ
ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ
ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ
ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆ ՕՐԸ

Գլուխ I.

ԸՆՏՐԱԿԱՆ ՏԵՂԱՄԱՍԸ ԲԱՑԵԼԸ, ՄԻՆՉԵՎ ՔՎԵԱՐԿՈՒԹՅՈՒՆԸ ՄԿՍԵԼՆ ԱՆՑԿԱՑՎԵԼԻՔ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԵՐԸ

ԸՆՏՐԱԿԱՆ ՏԵՂԱՄԱՍԸ ԲԱՑԵԼԸ

Ընտրատեղամասը բացվում է քվեարկության օրը, ժամը 7⁰⁰-ին:

ՈՒՇԱԴՐՈՒԹՅՈՒՆ

Եթե պարզվում է, որ այդ պահի համար տեղամասային ընտրական հանձնաժողովի անդամների թիվը պակաս է յոթից, տվյալ տեղեկությունն անհապաղորեն հաղորդվում է ընտրատարածքային ընտրական հանձնաժողովին, որն անհապաղորեն կայացնում է համապատասխան որոշում:

Տեղամասային ընտրական հանձնաժողովի անդամները պարտավոր են քվեարկության օրվա ընթացքում կրել իրենց համար հատկացված հատուկ համազգեստ: Տվյալ պահանջի չկատարումը վերադաս ընտրական հանձնաժողովի կողմից կքննարկվի որպես կարգապահական խախտում, և կարգապահական կոմիտեի կողմից կարգապահական պատասխանատվության ենթարկման հիմք կհանդիսանա:

ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆ ՇԵՆՔՈՒՄ ՆԵՐԿԱ ԳՏՆՎԵԼՈՒ ԻՐԱՎՈՒՆՔ ՈՒՆԵՑՈՂ ԱՆՁԻՆՔ

Քվեարկության շենքում ներկա գտնվելու իրավունք ունեն (Ընտրական օրենսգիրք՝ հոդված 8.16, հոդված 39.3,6, հոդված 42.5, հոդված 44.5).

- ▶ տեղամասային ընտրական հանձնաժողովի անդամները,
- ▶ վերադաս ընտրական հանձնաժողովի անդամները/ներկայացուցիչները,
- ▶ ընտրական սուբյեկտների ներկայացուցիչները (ոչ ավելի, քան միևնույն ընտրական սուբյեկտի 1 ներկայացուցիչ),
- ▶ գրանցված տեղական դիտորդական կազմակերպության դիտորդները (ոչ ավելի, քան միևնույն տեղական դիտորդական կազմակերպության 1 դիտորդ),
- ▶ գրանցված միջազգային կազմակերպության դիտորդները (ոչ ավելի, քան միևնույն միջազգային կազմակերպության 2 դիտորդ (հնարավոր է, որ նրանց ուղեկցեն թարգմանիչներ)),
- ▶ լրատվամիջոցների հավատարմագրված ներկայացուցիչները (մամուլի և զանգվածային լրատվության միևնույն միջոցի ոչ ավելի, քան 3 ներկայացուցիչ):

ՈՒՇԱԴՐՈՒԹՅՈՒՆ

Քվեարկության շենքում ներկա գտնվելու իրավունք ունեցող բոլոր անձինք անպայման պետք է կրեն իրենց ով լինելը և կարգավիճակը հավաստող կրծքանշան (Ընտրական օրենսգիրք՝ հոդված 8.17):

ԴԻՏՈՐԴԻ, ԸՆՏՐԱԿԱՆ ՍՈՒԲՅԵԿՏԻ ԵՎ ՉԱՆԳԱԾԱՅԻՆ ԼՐԱՏՎԱՄԻՋՈՑԻ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑՉԻ ԻՐԱՎԱԿԱՆ ՎԻՃԱԿԸ

(Ընտրական օրենսգիրք՝ հոդված 41)

Դիտորդը, ընտրական սուբյեկտի ներկայացուցիչն իրավունք ունի.

- ▶ քվեարկության օրը ցանկացած ժամանակ գտնվել քվեարկության շենքում, առանց սահմանափակման տեղաշարժվել ընտրական տեղամասի տարածքում և ազատ, առանց խոչընդոտի դիտարկել քվեարկության գործընթացի բոլոր փուլերը ցանկացած տեղից,
- ▶ քվեարկության օրը ցանկացած ժամանակ փոխարինել իրեն ներկայացնող կազմակերպության գրանցված այլ ներկայացուցիչ:

Դիտորդը, ընտրական սուբյեկտի և զանգվածային լրատվամիջոցի ներկայացուցիչը իրավունք չունի.

- ▶ միջամտել ընտրական հանձնաժողովի գործառույթներին և գործունեությանը,
- ▶ ներգործել ընտրողների կամքի ազատ դրսևորման վրա,
- ▶ քարոզել ընտրողին որևէ ընտրական սուբյեկտի օգտին կամ ի վնաս որևէ սուբյեկտի,
- ▶ կրել որևէ ընտրական սուբյեկտի խորհրդանշանը և նշանը:

ԸՆՏՐԱԿԱՆ ՏԵՂԱՄԱՍԸ ԲԱՑՎԵԼՈՒՑ ՄԻՆՉԵՎ ԶՎԵԱՐԿՈՒԹՅՈՒՆ ՍԿՍՎԵԼՆ ԱՆՑԿԱՑՎԵԼԻՔ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԵՐԸ

Ընտրատեղամասը բացվելուց մինչև քվեարկության սկսվելն ընթացակարգերն անց են կացվում հետևյալ հաջորդականությամբ (Ընտրական օրենսգիրք՝ հոդված 61-62):

I Ընտրական տեղամասի բացվելուն պես բացվում է քվեարկության օրվա գործառնության մատյան (Ընտրական օրենսգիրք՝ հոդված 61.2ա):


Տեղամասային ընտրական հանձնաժողովի նախագահը ընտրական տեղամասը բացվելուն պես, քվեարկության օրվա գործառնության մատյանը փոխանցում է տեղամասային ընտրական հանձնաժողովի քարտուղարին: Հանձնաժողովի քարտուղարը պարտավոր է, հանձնաժողովի նախագահի հետ մեկտեղ գրանցել քվեարկության օրվա բոլոր ընտրական ընթացակարգերը և նշել դրանց անցկացման ժամանակը (Ընտրական օրենսգիրք՝ հոդված 62.3):

Քվեարկության օրվա գործառնության մատյանի առաջին և երկրորդ էջերում, իսկ անհրաժեշտության դեպքում նաև՝ 10-րդ և հաջորդ էջերում, հանձնաժողովի քարտուղարը գրանցում է քվեարկության շենքում գտնվող հանձնաժողովի բոլոր անդամների անունները և ազգանունները (նրանց ներկայացնող սուբյեկտի մատնանշմամբ) և քվեարկության շենքում գտնվելու իրավունք ունեցող բոլոր անձանց տվյալները (անուն, ազգանուն, ներկայացնող կազմակերպությունը կամ ընտրական սուբյեկտը) և նրանց ստորագրությամբ վավերացնել տալիս այն:



II

Տեղամասային ընտրական հանձնաժողովի նախագահը ստուգում է կնքված փաթեթի ամբողջականությունը, որում տեղադրված է տեղամասային ընտրական հանձնաժողովի հատուկ կնիքը, բացում է այն (հանձնաժողովի քարտուղարը քվեարկության օրվա գործավարության մատյանում նշում է կնիքի համարը) (Ընտրական օրենսգիրք՝ հոդված 61.2.բ):



III

Տեղամասային ընտրական հանձնաժողովի նախագահը հանձնաժողովի անդամների միջև գործառույթների բաշխման նպատակով, հանձնաժողովի անդամների միջև անց է կացնում վիճակահանություն:

Տեղամասային ընտրական հանձնաժողովի անդամների միջև բաշխվելիք գործառույթներն են.

- ▶ ընտրողների հոսքը կարգավորող հանձնաժողովի անդամ,
- ▶ ընտրողների գրանցում իրականացնող հանձնաժողովի անդամ (առնվազն մեկ գրանցող յուրաքանչյուր 300 ընտրողի հաշվով),

- ▶ քվեատուփը և հատուկ ծրարները հսկող հանձնաժողովի անդամ,
- ▶ շրջիկ (տեղափոխվող) քվեատուփը տանող հանձնաժողովի 2 անդամ (անհրաժեշտության դեպքում):

ՈՒՇԱԴՐՈՒԹՅՈՒՆ

Վիճակահանությանը չեն մասնակցում հանձնաժողովի նախագահը/հանձնաժողովի նախագահի տեղակալը/հանձնաժողովի քարտուղարը:

Տեղամասային ընտրական հանձնաժողովի նախագահը մինչև վիճակահանության անցկացումը, տեղամասային ընտրական հանձնաժողովի անդամների թիվը պետք է համեմատի բաշխվելիք գործառույթների թվին:

Եթե պարզվի, որ վիճակահանության ժամանակ ներկա գտնվող հանձնաժողովի անդամների թիվը բաշխվելիք գործառույթներից.

- ▶ 1-ով պակաս է՝ նվազեցվում է ընտրողներին գրանցում իրականացնող հանձնաժողովի անդամների թիվը,
- ▶ 2-ով պակաս է՝ հանձնաժողովի նախագահի տեղակալը կատարում է ընտրողների հոսքը կարգավորող հանձնաժողովի անդամի գործառույթ,
- ▶ 3-ով պակաս է՝ հանձնաժողովի նախագահը կատարում է քվեատուփը և հատուկ ծրարները հսկող հանձնաժողովի անդամի գործառույթ:

Նախ՝ տեղամասային ընտրական հանձնաժողովի նախագահը վիճակահանություն է անցկացնում կուսակցությունների կողմից նշանակված հանձնաժողովի անդամներից շրջիկ (տեղափոխվող) քվեատուփը տանող հանձնաժողովի 2 անդամների որոշման նպատակով (անհրաժեշտության դեպքում):



ՈՒՇԱԴՐՈՒԹՅՈՒՆ

Վիճակահանությամբ որոշված անձինք չեն կարող լինել մեկ ընտրական սուբյեկտի կողմից ներկայացված հանձնաժողովի անդամներ:

Տեղամասային ընտրական հանձնաժողովի նախագահը.

- ▶ կուսակցությունների կողմից նշանակված հանձնաժողովի անդամներին համապատասխան, պատրաստում է միևնույն ձևի և տեսակի թերթիկներ,
- ▶ 2 թերթի վրա միևնույն գրելու միջոցով գրում է գործառույթի անվանումը՝ «շրջիկ (տեղափոխվող) քվեատուփը տանող»,
- ▶ վիճակահանության թերթիկները վավերացնում է հանձնաժողովի հատուկ կնիքով,
- ▶ վիճակահանության թերթիկներն այնպես է ծալում, որ անհնար լինի կարդալ տեքստը և տեղադրում է սեղանի վրա:

Վիճակահանությանը մասնակցող հանձնաժողովի անդամները մեկ-մեկ վերցնում են վիճակահանության թերթիկները:

ՈՒՇԱԴՐՈՒԹՅՈՒՆ

- ▶ Այն դեպքում, եթե վիճակահանությամբ որոշված անձինք տարբեր սուբյեկտների կողմից նշանակված հանձնաժողովի անդամներ են, վիճակահանությունը կհամարվի ավարտված:
- ▶ Այն դեպքում, եթե վիճակահանության ժամանակ վիճակահանության երկու թերթերն էլ բաժին հասնեն դաշինքի մեջ մտնող քաղաքական կուսակցությունների կողմից նշանակված հանձնաժողովի անդամներին, հանձնաժողովի նախագահի հետ համաձայնեցմամբ, գործառույթը կիրականացնի նրանցից մեկը, իսկ երկրորդ անդամին որոշելու համար վիճակահանությունը կանցկացվի կրկին՝ այլ սուբյեկտների կողմից նշանակված հանձնաժողովի անդամների միջև:

Հանձնաժողովի քարտուղարը վիճակահանության արդյունքները գրառում է գործավարության մատյանի 3-րդ էջում (հանձնաժողովի անդամները ստորագրությամբ հաստատում են գործառույթի շնորհումը):

Շրջիկ (տեղափոխվող) քվեատուփը տանող հանձնաժողովի անդամներին որոշելուց հետո տեղամասային ընտրական հանձնաժողովի նախագահը վիճակահանություն է անցկացնում այլ գործառույթների բաշխման համար.

Տեղամասային ընտրական հանձնաժողովի նախագահը.

- ▶ հանձնաժողովի անդամներին թվին համապատասխան, պատրաստում է միևնույն ձևի և տեսակի թերթիկներ,
- ▶ թերթերի վրա միևնույն գրելու միջոցով գրում է գործառույթի անվանումը՝ «ընտրողների հոսքը կարգավորող», «ընտրողներին գրանցող», «քվեատուփը և հատուկ ծրարները վերահսկող»,

- ▶ վիճակահանության թերթիկները վավերացնում է հանձնաժողովի հատուկ կնիքով,
- ▶ վիճակահանության թերթիկներն այնպես է ծալում, որ անհնար լինի կարդալ տեքստը և տեղադրում է սեղանի վրա,
- ▶ վիճակահանությանը մասնակցող հանձնաժողովի անդամները մեկ-մեկ վերցնում են վիճակահանության թերթիկները:

Հանձնաժողովի քարտուղարը վիճակահանության արդյունքները գրառում է քվեարկության օրվա գործավարության մատյանի 3-րդ էջում (հանձնաժողովի անդամները ստորագրությամբ հաստատում են գործառույթի շնորհումը):

Հանձնաժողովի անդամի վիճակահանությամբ սահմանված գործառույթը հանձնաժողովի այլ անդամի ժամանակավորապես կարելի է փոխանցել միայն հանձնաժողովի նախագահի թույլտվությամբ, ինչը հանձնաժողովի քարտուղարը նշում է քվեարկության օրվա գործավարության մատյանի 5-րդ էջում: Հանձնաժողովի անդամը ստորագրությամբ վավերացնում է գործառույթի փոխանցումը (*Ընտրական օրենսգիրք՝ 61.2.է*):

Եթե հանձնաժողովի որևէ անդամ հանձնաժողով է ներկայացել վիճակահանության ընթացակարգն ավարտվելուց հետո, նրան գործառույթ շնորհելու հարցը վճռում է տեղամասային ընտրական հանձնաժողովի նախագահը, իսկ նրա աշխատանքի վարձատրության հարցը՝ ընտրատարածքային ընտրական հանձնաժողովը (*Ընտրական օրենսգիրք՝ հոդված 61.4*):

IV

Տեղամասային ընտրական հանձնաժողովի նախագահը ընտրական տեղամասում գտնվող ընտրական սուբյեկտների ներկայացուցիչներից վիճակահանությամբ որոշում է առավելագույնը 2 ներկայացուցիչների, որոնք կդիտարկեն բոլորքների գրանցման գործընթացը (*Ընտրական օրենսգիրք՝ հոդված 61.5*):

ՈՒՇԱՂՈՒԹՅՈՒՆ

Վիճակահանությանը չեն մասնակցում հանձնաժողովի քարտուղար ընտրված հանձնաժողովի անդամին նշանակող ընտրական սուբյեկտի ներկայացուցիչները (*Ընտրական օրենսգիրք՝ հոդված 61.5*):

V

Տեղամասային ընտրական հանձնաժողովի նախագահը հայտարարում է ընտրողների թիվը՝ ըստ ընտրացուցակների, ինչպես նաև՝ ստացած ընտրական քվեաթերթիկների և հատուկ ծրարների քանակը (*Ընտրական օրենսգիրք՝ հոդված 61.6.ա-բ*)

VI

Տեղամասային ընտրական հանձնաժողովի նախագահը ստուգում է և անհատական համար ունեցող գմռակնիքով կնքում է հիմնական և շրջիկ (տեղափոխվող) քվեատուփերը (*Ընտրական օրենսգիրք՝ հոդված 61.6.գ*):

VII

Տեղամասային ընտրական հանձնաժողովի նախագահը հանձնաժողովի անդամներին է փոխանցում նյութերը:



Տեղամասային ընտրական հանձնաժողովի նախագահը ընտրողներին գրանցող հանձնաժողովի անդամներին փոխանցում է.

- ▶ այբբենական կարգով բաժանված միասնական ընտրացուցակները, նա գրանցողներից մեկին փոխանցում է նաև ընտրողների հատուկ ցուցակը (այսպիսինի գոյություն դեպքում),
- ▶ ընտրական քվեաթերթիկների մեկական նոթատետր,
- ▶ նշմարման հեղուկը,
- ▶ գրանցողների կնիքներ (կնիքների համարները նշվում են քվեարկության օրվա գործավարության մատյանի 3-րդ էջում):



ՈՒՇԱԴՐՈՒԹՅՈՒՆ

- ▶ Տեղամասային ընտրական հանձնաժողովի նախագահը յուրաքանչյուր գրանցման սեղանի մոտ պետք է փակցնի ընտրողների ազգանունների այբբենական հաջորդականությունը՝ սեղանի վրա տեղաբաշխված ցուցակներին համապատասխան:
- ▶ Եթե գրանցողների կնիքները անհրաժեշտ քանակից պակաս լինեն, կամ կնիքը վնասված լինի, հանձնաժողովի նախագահի որոշմամբ նվազեցվում է գրանցողների թիվը:

Տեղամասային ընտրական հանձնաժողովի նախագահը ընտրողների հոսքը կարգավորող հանձնաժողովի անդամին փոխանցում է նշմարումը ստուգող ուղտրամանուշակագույն լապտեր:



Տեղամասային ընտրական հանձնաժողովի նախագահը քվեատուվոր և հատուկ ծրարները հսկող հանձնաժողովի անդամին է փոխանցում հիմնական քվեատուվոր և հատուկ ծրարները:

VIII Լրացվում է ստուգողական թերթը (Ընտրական օրենսգիրք՝ հոդված 61.10):

Միևհա քվեարկությունը սկսվելը, տեղամասային ընտրական հանձնաժողովի նախագահը և հանձնաժողովի քարտուղարը լրացնում են ստուգողական թերթերը (բացի առաջին ընտրողի մասին տվյալներից): Տեղամասային ընտրական հանձնաժողովի բոլոր ներկա գտնվող անդամները ստորագրում են ստուգողական թերթը:

[illegible]

ՈՒՇԱԴՐՈՒԹՅՈՒՆ

Հանձնաժողովի անդամներին նյութերը փոխանցելուց հետո անհապաղ, մինչև քվեարկության սկսվելը, պետք է լրացվի ստուգողական թերթը (մի՛ սպասեք առաջին ընտրողին):

Երբ գալիս է առաջին ընտրողը, գրանցվում է և ստանում ընտրական քվեաթերթիկը, հանձնաժողովի քարտուղարը նրա մասին տվյալները լրացնում է ստուգողական թերթի մեջ, որը ստորագրում է ընտրողը: Ստուգողական թերթի վրա նաև նշվում է թերթերը քվեատուների մեջ գցելու ճշգրիտ ժամանակը: Տեղամասային ընտրական հանձնաժողովի նախագահը ստուգողական թերթի մեկ օրինակը գցում է հիմնական քվեատուի մեջ, երկրորդ օրինակը՝ շրջիկ (տեղափոխվող) քվեատուի մեջ (այսպիսինի գոյության դեպքում), իսկ երրորդ օրինակը պահում է՝ հետագայում քվեատուներում առկա ստուգողական թերթերի հետ համեմատելու նպատակով:

Ստուգողական թերթի տվյալները գրի են առնվում քվեարկության օրվա գործավարության մատյանի 4-րդ էջում:

ՈՒՇԱԴՐՈՒԹՅՈՒՆ

- ▶ Եթե ընտրողի կողմից ներկայացված անձը հաստատող փաստաթղթի մեջ չի նշված հաշվառման հասցեն, հանձնաժողովի քարտուղարը այդ տվյալը ստուգողական թերթի մեջ պետք է տեղափոխի համապատասխան ընտրացուցակից:
- ▶ Առաջին ընտրողի կողմից գրանցումն անցնելուց հետո, հանձնաժողովի նախագահը ընտրատարածքային ընտրական հանձնաժողովին տեղեկացնում է տուփի զմռսակնքման, ստուգողական թերթ(եր)ը տուփ(եր)ի մեջ գցելու մասին:



ԳԼՈՒԽ II. ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԸ

ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆ ԱՆՑԿԱՑՈՒՄԸ

(Ընտրական օրենսգիրք՝ հոդված 60, հոդված 64, հոդված 65)

Քվեարկությունն անց է կացվում քվեարկության օրվա (8 հոկտեմբերի) ժամը 08:00-ից մինչև ժամը 20:00-ն:

Ձայն տալու ընթացակարգն անց է կացվում հետևյալ կարգի և հաջորդականության պահպանմամբ.

I Քվեարկության շենք մտնելիս՝ ընտրողը ընտրողների հոսքը կարգավորողի մոտ անցնում է նշմարման ստուգման ընթացակարգ:

Ընտրողների հոսքը կարգավորողը.

- ▶ կարգավորում է ընտրատեղամաս մտած ընտրողների հոսքը,
- ▶ ընտրողին խնդրում է ներկայացնել Վրաստանի քաղաքացու ինքնությունը հաստատող վկայական կամ Վրաստանի քաղաքացու անձնագիր,
- ▶ ուղտրամանուշակագույն լապտերով ստուգում է՝ արդյոք չունի ընտրողը նշմարում,
- ▶ հետևում է, թե քանի ընտրող կա կանգնած ընտրողի համար հատկացված գրանցման սեղանի մոտ. եթե գրանցման սեղանի մոտ երկուսից ավելի ընտրող է կանգնած, ժամանակավոր դանդաղեցնում է քվեարկության շենք հերթական ընտրողի մուտքը,
- ▶ ընտրողին ուղղորդում է դեպի այն գրանցման սեղանը, որին պատկանում է ընտրողների ցուցակում ընդգրկված՝ նրա ազգանվան առաջին տառը:



ՈՒՇԱԴՐՈՒԹՅՈՒՆ

Եթե նշմարում ստուգող հատուկ սարքը բացահայտում է, որ ընտրողն արդեն ունի նշմարում, նրան արգելվում է մասնակցել քվեարկությանը, իսկ նրա ով լինելը նշվում քվեարկության օրվա գործավարության մատյանում:

II Ընտրողը գրանցում է անցնում ընտրողներին գրանցողի մոտ:

Ընտրողներին գրանցողը.

- ▶ խնդրում է ընտրողին ներկայացնել Վրաստանի քաղաքացու ինքնությունը հավաստող վկայականը կամ Վրաստանի քաղաքացու անձնագիրը (Վրաստանի բռնազավթված տարածքից հարկադրաբար վերաբնակեցված անձի՝ տարիանվածի դեպքում՝ տարիանվածի վկայականը, Վրաստանի քաղաքացու ինքնությունը հավաստող վկայականի կամ Վրաստանի քաղաքացու անձնագրի հետ),

ՈՒՇԱԴՐՈՒԹՅՈՒՆ

Եթե ընտրողների ընդհանուր ցուցակի մեջ ընտրողի մասին տվյալներ չեն գտնվել.

- ▶ ընտրական տեղամասում էլեկտրոնային ցուցակների առկայության դեպքում, տվյալների վերստուգման համար պատասխանատու անձը պարտավոր է ընտրողին որոնել-գտնել էլեկտրոնային ցուցակներում և ընտրողին հաղորդել տեղեկատվություն այն տեղամասի մասին, որտեղ նա հաշվառված է,
- ▶ ընտրական տեղամասում էլեկտրոնային ցուցակների բացակայության դեպքում, տվյալների վերստուգման համար պատասխանատու անձը պետք է կապվի ընտրատարածքային ընտրական հանձնաժողովի կամ ԿԸՀ-ի թեժ գծի հետ՝ ընտրողի մասին տեղեկատվություն ստանալու համար:
- ▶ ստուգում է, ներկայացված փաստաթղթում / փաստաթղթերում տեղ գտած, ընտրողի հաշվառման տվյալների և ընտրողների ցուցակում առկա տվյալների համապատասխանությունը: Ընտրողը քվեարկությանը մասնակցում է, եթե ընտրողների համապատասխան ցուցակում Վրաստանի քաղաքացու անձնական համարի, սեռի և լուսանկարի հետ մեկտեղ, ամբողջությամբ համապատասխանում են ստորև թվարկված տվյալներից գոնե 3-ը.
 - անունը,
 - ազգանունը,
 - ծննդյան ամսաթիվ, ամիս, տարեթիվը,
 - հասցեն (ըստ Վրաստանի քաղաքացու ինքնության վկայականի կամ Գործակալության տվյալների բազայի),



- ▶ ստուգում է ներկայացված փաստաթղթում/փաստաթղթերում և ընտրողների ցուցակում առկա լուսանկարների և ընտրողի դեմքի համապատասխանությունն իրար,

ՈՒՇԱԴՐՈՒԹՅՈՒՆ

- ▶ Եթե ընտրողի մասին տվյալները ստուգելիս հավաստվի, որ, ներկայացված փաստաթղթում/փաստաթղթերում տեղ գտած, ընտրողի հաշվառման տվյալները (բացառությամբ լուսանկարի) համապատասխանում են ընտրողների ցուցակում առկա տվյալներին, սակայն ընտրողների գրանցումն իրականացնողն այս ընտրողի դեմքը և ներկայացված փաստաթղթում/փաստաթղթերում կամ ընտրողների ցուցակում առկա լուսանկարը միմյանց անհամապատասխան է համարում, նա դիմում է տեղամասային ընտրական հանձնաժողովի նախագահին, որը, ստորև սահմանված համապատասխան ընտրական ընթացակարգի կատարումից հետո, ընտրողին տալիս է քվեարկությանը մասնակցելու իրավունք:
- ▶ Եթե տեղամասային ընտրական հանձնաժողովի նախագահը հաստատում է տվյալ անհամապատասխանությունը, տեղամասային ընտրական հանձնաժողովի քարտուղարը քվեարկության օրվա գործավարության մատյանում, դրա համար հատկացված էջում գրառում է անում, որում նշում է անհամապատասխանության փաստը, ընտրողի անունը, ազգանունը և ընտրողների ցուցակում նրա հերթական համարը: Սույն գրառումը հաստատվում է տեղամասային ընտրական հանձնաժողովի նախագահի և հանձնաժողովի քարտուղարի ստորագրություններով:
- ▶ Եթե տեղամասային ընտրական հանձնաժողովի նախագահը չի հաստատի տվյալ անհամապատասխանությունը, ընտրողների գրանցումն իրականացնողն իրավունք ունի քվեարկության օրվա գործավարության մատյանում դրա համար հատկացված էջում գրել իր առանձնահատուկ կարծիքը:
- ▶ Վերոնշյալ դեպքերում տեղամասային ընտրական հանձնաժողովի քարտուղարը գործավարության մատյանին կցում է ընտրողի կողմից ներկայացված փաստաթղթի ֆոտոպատճենը, որը վավերացնում է ստորագրությամբ (*Ընտրական օրենսգիրք` – հոդված 65.2.բ, հոդված 65.2¹*):


- ▶ ընտրողների ցուցակում ընտրողի մասին տվյալների համապատասխանության հաստատման դեպքում, իրականացնում է ընտրողի նշմարում (նշմարումը չի կիրառվում պատիժների իրականացման հիմնարկներում, հիվանդանոցներում և այլ ստացիոնար բուժհաստատություններում (հիվանդների նկատմամբ)),



ՈՒՇԱԴՐՈՒԹՅՈՒՆ

Նշմարման ընթացակարգ անցնելուց հրաժարվելու դեպքում, ընտրողն իրավունք չունի մասնակցելու քվեարկությանը, և նրան չի տրամադրվում քվեաթերթիկ:


- ▶ ստորագրում է ընտրողների միասնական ցուցակի համապատասխան սյունակում, այնուհետև ընտրողը ստորագրությամբ հաստատում է քվեաթերթիկը/քվեաթերթիկները ստանալը,



ՈՒՇԱԴՐՈՒԹՅՈՒՆ

Եթե քվեարկության ընթացքում պարզվի, որ ընտրողը ընտրացուցակում ստորագրել է այլ ընտրողի ազգանվան դիմաց գտնվող սյունակում, նման դեպքում ընտրողը, որի ազգանվան դիմաց արձանագրված է ստորագրությունը, պետք է ստորագրի նույն սյունակում: Ընտրողների գրանցումն իրականացնողը նշվածի վերաբերյալ պետք է բացատրագիր գրի (ընտրողի անվան և ազգանվան մատնանշմամբ):

- ▶ քվեաթերթիկ/քվեաթերթիկներ տրամադրելիս՝ ստորագրում է դրանց դարձերեսի համապատասխան սյունակում և վավերացնում գրանցումն իրականացնողի կնիքով:



ՈՒՇԱԴՐՈՒԹՅՈՒՆ

Ընտրողների գրանցումն իրականացնողի գործառույթի փոխանցման դեպքում, գրանցողը պարտավոր է կրկին հաշվել ընտրողների ցուցակներում ընտրողների ստորագրությունների և իր կողմից տրամադրված ընտրական քվեաթերթիկների քանակությունները (ներառյալ հանձնաժողովի նախագահին փոխանցված վնասված ընտրական քվեաթերթիկների քանակը) և արդյունքները տեղեկացնել հանձնաժողովի նախագահին: Տվյալների միջև հավասարության բացակայության դեպքում գրել բացատրագիր, որը կկցվի քվեարկության արդյունքների ամփոփիչ արձանագրությանը/արձանագրություններին:


III

Ընտրողը մտնում է քվեախցիկ և լրացնում ընտրական քվեաթերթիկը/քվեաթերթիկները: Ընտրական քվեաթերթիկը/քվեաթերթիկները լրացնելիս՝ արգելվում է այլ անձի ներկայություն:



ՈՒՇԱԴՐՈՒԹՅՈՒՆ


- ▶ Եթե ընտրողը չի կարող ինքնուրույն լրացնել քվեաթերթիկը, նա իրավունք ունի, իրեն օգնելու համար, քվեախցիկ հրավիրել ցանկացած անձի, բացառությամբ ընտրական հանձնաժողովի անդամի, թեկնածուի, ընտրական սուբյեկտի ներկայացուցչի, մամուլի և զանգվածային լրատվության այլ միջոցի ներկայացուցչի և դիտորդի (*Ընտրական օրենսգիրք՝ հոդված 65.3*):
- ▶ Եթե ընտրողը կամ տեղամասային ընտրական հանձնաժողովի անդամը վնասել է քվեաթերթիկը կամ հատուկ ծրարը, նրանք այդ մասին պետք է տեղեկացնեն հանձնաժողովի նախագահին: Հանձնաժողովի նախագահի հանձնարարությամբ ընտրողների գրանցումն իրականացնող անձը պարտավոր է փոխել ընտրողի վնասված քվեաթերթիկը/հատուկ ծրարը նորով: Հանձնաժողովի նախագահը ընտրողի ներկայությամբ կտրում է վնասված քվեաթերթիկի/հատուկ ծրարի անկյունը, վրան գրում է «վնասված է» և ստորագրում: Հանձնաժողովի նախագահը վնասված քվեաթերթիկն առանձին է պահում (*Ընտրական օրենսգիրք՝ հոդված 65.4*):



IV

Ընտրողը գնում է առանձին դրված սեղանի մոտ, քվեատուփը և հատուկ ծրարները հսկողի ցուցումով ինքնուրույն վերցնում հատուկ ծրարը և նրա մեջ գետեղում ընտրական քվեաթերթիկը/ քվեաթերթիկները:

Քվեատուփը և հատուկ ծրարները հսկողը նրանից հետո, երբ համոզվում է, որ ընտրողի ձեռքին միայն մեկ հատուկ ծրար կա, բացում է քվեատուփի ճեղքը և մատնանշում ընտրողին, որ հատուկ ծրարը գցի քվեատուփի մեջ:



V

Ընտրողը հատուկ ծրարը գցում է քվեատուփի մեջ:

ՈՒՇԱԴՐՈՒԹՅՈՒՆ

- ▶ Թույլ չի տրվում, որ քվեատուփին միաժամանակ մեկից ավելի ընտրող մոտենա:
- ▶ Դիտորդը, ընտրական սուբյեկտի ներկայացուցիչն իրավունք ունեն դիտարկելու քվեատուփը, քվեատուփի մեջ հատուկ ծրարներ գցելը:

VI

Հատուկ ծրարը քվեատուփի մեջ գցելուց հետո, ընտրողը հեռանում է ընտրատեղամասից:

«Ֆիզիկական վիճակի» պատճառով ընտրողի քվեարկության ընթացակարգը

(Վրաստանի Կենտրոնական ընտրական հանձնաժողովի 2012 թվականի հունիսի 21-ի որոշում №20/2012)

Ընտրողը, որը ֆիզիկական վիճակի, մասնավորապես, վերին վերջավորություններ չունենալու պատճառով, չի կարողանում քվեարկության ընթացակարգերը (նշմարում, քվեաթերթիկներ ստանալիս ստորագրել, քվեաթերթիկները քվեատուփի մեջ գցել) ինքնուրույն կատարել, քվեարկությանը մասնակցում է հետևյալ ընթացակարգերի նախատեսմամբ.

- ▶ ընտրողը չի անցնում նշմարման ստուգման և նշմարման ընթացակարգերը,
- ▶ ընտրողին ընտրական քվեաթերթիկ/քվեաթերթիկներ հանձնելիս՝ ընտրողների գրանցում իրականացնող հանձնաժողովի անդամն ընտրողների միասնական ցուցակի «Ընտրողի ստորագրություն» սյունակում կատարում է «ֆիզիկական վիճակ» գրառումը և ստորագրությամբ վավերացնում այն,
- ▶ ընտրողն իրավունք ունի օգնության հրավիրել ցանկացած անձի, բացառությամբ ընտրական հանձնաժողովի անդամի, թեկնածուի, ընտրական սուբյեկտի ներկայացուցչի, մամուլի և զանգվածային լրատվության այլ միջոցի ներկայացուցչի և դիտորդի,
- ▶ տվյալ ընտրողի փոխարեն, նրա ներկայությամբ, ընտրական քվեաթերթիկը/քվեաթերթիկները հատուկ ծրարի մեջ է զետեղում և այնուհետև քվեատուփի մեջ է գցում նրա կողմից ընտրված անձը, որը նրան օգնում է նաև քվեախցիկում լրացնել ընտրական քվեաթերթիկը/քվեաթերթիկները:

ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆ ՕՐԸ ԿԱՐԳԱԴԱՅՈՒԹՅԱՆ ՊԱՅՊԱՆՈՒՄԸ ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆ ՇԵՆՔՈՒՄ ԵՎ ՆՐԱ ՀԱՐՈՂ ՏԱՐԱԾՔՈՒՄ

(Ընտրական օրենսգիրք՝ հոդված 59)

Քվեարկության օրը քվեարկության կարգապահությունը պահպանելու համար, պատասխանատու է տեղամասային ընտրական հանձնաժողովի նախագահը: Տեղամասային ընտրական հանձնաժողովի նախագահի կողմից քվեարկության շենքում կարգապահության պահպանման նպատակով ընդունված որոշումների կատարումը պարտադիր է ընտրական հանձնաժողովի անդամների, քվեարկության շենքում գտնվելու իրավունք ունեցող բոլոր անձանց և ընտրողների համար:

Տեղամասային ընտրական հանձնաժողովն իրավունք ունի, հանձնաժողովի աշխատանքը խանգարելու և կարգապահությունը խախտելու դեպքում, կարգապահությունը խախտողին վտարել այն շենքից, որտեղ տեղակայված է հանձնաժողովը: Կարգը խախտողի վտարման դեպքում կազմվում է համապատասխան ակտ, որը ստորագրում են հանձնաժողովի նախագահը և անդամները:

ՈՒՇԱԴՐՈՒԹՅՈՒՆ

- ▶ Արգելվում է քվեարկության շենք գինված անձանց մուտքը:
- ▶ Եթե քվեարկության շենքում կամ դրան հարող տարածքում վտանգ է ստեղծվում հասարակական կարգին, քվեարկության անցկացմանը կամ ընտրական փաստաթղթերի անվտանգ փոխադրմանը, տեղամասային ընտրական հանձնաժողովի նախագահի պահանջով կարող են հրավիրվել ոստիկանության աշխատակիցներ: Հասարակական կարգի խախտումը խափանելուն պես, տեղամասային ընտրական հանձնաժողովի նախագահի համաձայնությամբ ոստիկանության աշխատակիցները լքում են քվեարկության շենքը և դրան հարող տարածքը:

ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԻ ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ ԸՆԴԱՏՈՒՄԸ


Քվեարկության ժամանակ արգելվում է փակել քվեարկության շենքը, ընդհատել կամ դադարեցնել քվեարկությունը:

Եթե որևէ հանգամանք խոչընդոտում է քվեարկության գործընթացին, տեղամասային ընտրական հանձնաժողովի նախագահը պարտավոր է այդ մասին անհապաղորեն տեղեկացնել ընտրատարածքային ընտրական հանձնաժողովին և սպասել համապատասխան ցուցումների:

ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆԸ ՄԱՍՆԱԿՑԱԾ ԸՆՏՐՈՂՆԵՐԻ ՀԱՇՎԱՌՈՒՄԸ

(Ընտրական օրենսգիրք՝ հոդված 65.6)

Երաշխավորվում է, որ ընտրողների գրանցում իրականացնող հանձնաժողովի անդամները ժամը 10:00-ին, 12:00-ին, 15:00-ին և 17:00-ին, առանց քվեարկության գործընթացին խանգարելու, վերահաշվեն ցուցակներում ընտրողների ստորագրությունների և իրենց կողմից տրված քվեաթերթիկների քանակները (նախագահին փոխանցված վնասված քվեաթերթիկների քանակը ներառյալ) և տվյալները տեղեկացնեն նախագահին:



ՈՒՇԱԴՐՈՒԹՅՈՒՆ

Եթե տվյալների միջև տարբերություն հայտնաբերվի, ընտրողների գրանցում իրականացնող հանձնաժողովի անդամ անհապաղորեն պետք է բացատրագիր գրի, որը կկցվի քվեարկության արդյունքների ամփոփիչ արձանագրությանը/արձանագրություններին:

Տեղամասային ընտրական հանձնաժողովի քարտուղարը ընտրացուցակներում քվեարկության մասնակից ընտրողների ստորագրությունների թիվը ժամը 12:00-ի և 17:00-ի դրությամբ նշում է քվեարկության արդյունքների ցուցադրական արձանագրություններում, քվեարկության օրվա գործավարության մատյանում և տեղեկացնում ընտրատարածքային ընտրական հանձնաժողովին:

ՇՐՋԻԿ (ՏԵՂԱՓՈԽՎՈՂ) ՔՎԵԱՏՈՒՓԻ ՄԻՋՈՑՈՎ ՔՎԵԱՐԿՈՒԹՅՈՒՆԸ

Շրջիկ (տեղափոխվող) քվեատուփի միջոցով քվեարկության ընթացակարգը սկսվում է քվեարկության օրվա ժամը 09:00-ից և ավարտվում ժամը 19:00-ին: Քվեարկության ավարտից հետո անհապաղ կերպով զմռսակնքվում է քվեատուփի մեջ հատուկ ծրարները գցելու ճեղքը: Շրջիկ (տեղափոխվող) քվեատուփը ընտրական տեղամաս պետք է վերադարձվի ժամը 20-ից ոչ ուշ (Ընտրական օրենսգիրք՝ հոդված 66.1):



Քվեարկության շենքում գտնվելու իրավունք ունեցող անձինք, ըստ ցանկության, իրավունք ունեն դիտարկել շրջիկ (տեղափոխվող) քվեատուփի միջոցով ձայն տալու ընթացակարգը: Շրջիկ (տեղափոխվող) քվեատուփի միջոցով քվեարկելիս, ավտոմեքենայից օգտվելու դեպքում, տեղամասային ընտրական հանձնաժողովը պարտավոր է ավտոմեքենայի մեջ տեղ տրամադրել քվեարկության շենքում գտնվելու իրավունք ունեցող անձանցից վիճակահանությամբ որոշված 2 դիտորդի համար (Ընտրական օրենսգիրք՝ հոդված 66.5):

Տեղամասային ընտրական հանձնաժողովի նախագահը շրջիկ (տեղափոխվող) քվեատուվիը տանող հանձնաժողովի անդամներին փոխանցում է *(Ընտրական օրենսգիրք՝ հոդված 66.3)*.

- ▶ գմռասկնքված շրջիկ (տեղափոխվող) քվեատուվիը, որում տեղադրված է ստուգողական թերթը,
- ▶ շրջիկ (տեղափոխվող) քվեատուվիի ցուցակը,
- ▶ հատուկ ծրարներ,
- ▶ ընտրողների գրանցում կատարողի կողմից ստորագրությամբ և գրանցում կատարողի կնիքով վավերացված անհրաժեշտ քանակությամբ ընտրական քվեաթերթիկներ:

Հանձնաժողովի քարտուղարը քվեարկության օրվա գործավարության մատյանի 4-րդ էջում գրանցում է շրջիկ (տեղափոխվող) քվեատուվին ուղեկցող հանձնաժողովի անդամներին փոխանցված և քվեարկության ավարտից հետո չօգտագործված ընտրական քվեաթերթիկների քանակը, ինչպես նաև շրջիկ (տեղափոխվող) քվեատուվիը ընտրատեղամասից տանելու և ընտրատեղամաս վերադարձնելու ժամանակը:

ՈՒՇԱԴՐՈՒԹՅՈՒՆ

Նշմարումը չի կիրառվում շրջիկ (տեղափոխվող) քվեատուվի միջոցով քվեարկությանը մասնակցող ընտրողների հանդեպ *(Ընտրական օրենսգիրք՝ հոդված 64.5)*:

«Ֆիզիկական վիճակի» պատճառով ընտրողի կողմից շրջիկ (տեղափոխվող) քվեատուվի միջոցով քվեարկելու դեպքում, շրջիկ (տեղափոխվող) քվեատուվի ցուցակի «Ընտրողի ստորագրություն» սյունակում շրջիկ (տեղափոխվող) քվեատուվիը տանող հանձնաժողովի անդամը կատարում է գրառում՝ «Ֆիզիկական վիճակ» և վավերացնում ստորագրությամբ:

Նշված ընտրողի փոխարեն, նրա ներկայությամբ, ընտրական քվեաթերթիկը/քվեաթերթիկները լրացնում է, հատուկ ծրարի մեջ գետեղում և շրջիկ (տեղափոխվող) քվեատուվի մեջ գցում ընտրողի կողմից ընտրված անձը (բացառությամբ ընտրական հանձնաժողովի անդամի, թեկնածուի, ընտրական սուբյեկտի ներկայացուցչի, մամուլի և զանգվածային այլ լրատվամիջոցի ներկայացուցչի և դիտորդի) *(Վրաստանի Կենտրոնական ընտրական հանձնաժողովի 2012 թվականի հունիսի 21-ի որոշում №20/2012)*:

Շրջիկ (տեղափոխվող) քվեատուվիը տանող հանձնաժողովի անդամները, քվեարկության շենք վերադառնալուց հետո, տեղամասային ընտրական հանձնաժողովի քարտուղարին պետք է փոխանցեն չօգտագործված ընտրական քվեաթերթիկները և հատուկ ծրարները: Հանձնաժողովի քարտուղարը նման եաթերթիկների և ծրարների անկյունները պետք է կտրի, մակագրի «վնասված է» և հանձնաժողովի նախագահի ստորագրումից հետո առանձին պահի:

ԳԼՈՒԽ III. ԸՆՏՐԱԿԱՆ ՏԵՂԱՄԱՍԻ ՓԱԿԵԼԸ, ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ԱՍՓՈՓՈՒՄԸ

ԸՆՏՐԱԿԱՆ ՏԵՂԱՄԱՍԻ ՓԱԿԵԼԸ

Քվեարկության ընթացակարգն ավարտվում է և քվեարկության շենքը փակվում է ժամը 20:00-ին: Այդ պահի համար հերթում կանգնած ընտրողները կարող են քվեարկել: Տեղամասային ընտրական հանձնաժողովի նախագահի հանձնարարությամբ հանձնաժողովի անդամներից մեկը հաշվառում է հերթում կանգնած ընտրողների ազգանունները, անունները և նրանց թիվը հայտնում տեղամասային ընտրական հանձնաժողովի նախագահին, իսկ հանձնաժողովի քարտուղարը քվեարկության օրվա գործավարության մատյանում նշում է հերթում կանգնած ընտրողների թիվը: Վերջին ընտրողի քվեարկումից անմիջապես հետո քվեարկությունը հայտարարվում է ավարտված, որից հետո տեղամասային ընտրական հանձնաժողովը զմռսակնքում է քվեատուփի ճեղքը (*Ընտրական օրենսգիրք` հոդված 65.8*):

Տեղամասային ընտրական հանձնաժողովի նախագահը պետք է ապահովի, որ բոլոր անձինք, բացի ծայները հաշվելիս քվեարկության շենքում գտնվելու իրավունք ունեցող անձանցից, հեռանան ընտրական տեղամասից: Տեղամասային ընտրական հանձնաժողովի քարտուղարը քվեարկության օրվա գործավարության մատյանում պետք է մատնանշի ծայները հաշվելիս քվեարկության շենքում գտնվող անձանց ով լինելը:

ՈՒՇԱԴՐՈՒԹՅՈՒՆ

Քվեարկության շենքը փակելուց հետո, քվեարկության շենք մտնելու և քվեարկության շենքից հեռանալու իրավունք ունեն քվեարկության շենքում լինելու իրավունք ունեցող անձինք:

ԸՆՏՐԱԿԱՆ ՏԵՂԱՄԱՍԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ` ԶԱՅՆԵՐԸ ՀԱՇՎԵԼՈՒ ԳՈՐԾԸՆԹԱՑԻ ՀԱՄԱՐ

Քվեարկության ավարտից հետո հանձնաժողովի նախագահը գնում է հանձնաժողովի` գրանցումն իրականացնող յուրաքանչյուր անդամի մոտ, որոնք հանձնաժողովի նախագահի ցուցումով (մինչև քվեարկության ավարտը գրանցողների կողմից գրված բացատրագրերում (այդպիսինի գոյության դեպքում) նշված տվյալների նախատեսմամբ) հաշվում են.

Ընտրողներին
տրված ընտրական
քվեաթերթիկների
թվից

—

Վնասված ընտրական
քվեաթերթիկների
թիվը

=

Ընտրողների
ստորագրությունների
թվին

ՈՒՇԱԴՐՈՒԹՅՈՒՆ

- ▶ Անհամապատասխանության դեպքում ընտրողների գրանցումն իրականացնողը կրկին պետք է հաշվի և ճշգրտի քանակությունները: Եթե անհամապատասխանությունը շարունակում է տեղ ունենալ, գրանցում իրականացնողը պետք է բացատրագիր գրի (պատճառի մատնանշմամբ), որը պետք է կցվի ամփոփիչ արձանագրությանը/արձանագրություններին:
- ▶ Գրանցում իրականացնողների բացատրագրերում (այդպիսինի գոյության դեպքում) նշված տվյալները պետք է նկատի առնվեն քվեարկության ամփոփիչ արձանագրություններ կազմելիս:
- ▶ Վերոնշյալ տվյալները որոշելուց հետո, երաշխավորվում է, որ գրանցում իրականացողները բոլոր տեսակի ցուցակներում հաշվեն քվեարկության մասնակից ընտրողների գենդերային տվյալները բոլոր տեսակի ցուցակներում: Հանձնաժողովի նախագահը տվյալները փոխանցում է ընտրատարածքային ընտրական հանձնաժողովին:

Հանձնաժողովի նախագահը քվեարկության շենքում գտնվելու իրավունք ունեցող անձանց ներկայությամբ, հանձնաժողովի անդամներից վիճակահանությամբ ընտրում է առնվազն երեք հաշվող, իսկ դիտորդներն իրենց կազմից փոխհամաձայնությամբ կընտրեն ոչ ավելի, քան երկու վերահսկիչ: Եթե դիտորդները չեն կարողանում համաձայնության գալ, նրանցից երկու վերահսկիչ վիճակահանությամբ կորոշի հանձնաժողովի նախագահը (*Ընտրական օրենսգիրք՝ հոդված 67.1*):

Հաշվողների որոշման համար վիճակահանությունն ընթանում է հետևյալ կարգի պահպանմամբ. Տեղամասային ընտրական հանձնաժողովի նախագահը.

- ▶ հանձնաժողովի անդամների թվին համապատասխան պատրաստում է միևնույն ձևի և տեսակի թերթեր,
- ▶ թերթերի վրա միևնույն գրչով գրում է գործառույթի անվանումը՝ «առաջին հաշվող», «երկրորդ հաշվող», «երրորդ հաշվող»,
- ▶ վիճակահանության թերթերը վավերացնում է հանձնաժողովի հատուկ կնիքով,
- ▶ վիճակահանության թերթերն այնպես է ծալում, որ անհնար լինի տեքստի ընթերցումը, և տեղադրում է սեղանի վրա:



Վիճակահանությանը մասնակցող հանձնաժողովի անդամները մեկ-մեկ վերցնում են վիճակահանության թերթերը: Հանձնաժողովի քարտուղարը վիճակահանության արդյունքները գրանցում է գործավարության մատյանի 3-րդ էջում (հանձնաժողովի անդամները ստորագրությամբ հաստատում են գործառույթի շնորհումը) *(Ընտրական օրենսգիրք՝ հոդված 61.2.գ):*

Հանձնաժողովի նախագահը ընտրական տեղամասում գտնվող ընտրական սուբյեկտների ներկայացուցիչներից վիճակահանությամբ որոշում է ոչ ավելի, քան 2 ներկայացուցիչ, որոնք հանձնաժողովի անդամներից վիճակահանությամբ որոշված հաշվողների հետ միասին մասնակցում են վավեր կամ/և անվավեր ընտրական քվեաթերթիկների հաշվման գործընթացին *(Ընտրական օրենսգիրք՝ հոդված 67.2):*

ՈՒՇԱԴՐՈՒԹՅՈՒՆ


Վիճակահանությանը չեն մասնակցում այն ընտրական սուբյեկտների ներկայացուցիչները, որոնց կողմից նշանակված հանձնաժողովի անդամները ևս հանդիսանում են վիճակահանությամբ որոշված հաշվողներ *(Ընտրական օրենսգիրք՝ հոդված 67.2):*

Հանձնաժողովի նախագահը և հաշվողները ընտրատեղամասը պատրաստում են ձայները հաշվելու ընթացակարգի համար.

- ▶ հաշվողները տեղ են զբաղեցնում սեղանի նույն կողմում,
- ▶ հանձնաժողովի նախագահը տեղը զբաղեցնում է այնպես, որ կարողանա տեսնել բոլոր հաշվողներին,
- ▶ հանձնաժողովի քարտուղարը տեղ է զբաղեցնում հանձնաժողովի նախագահի կողքին և լրացնում է քվեարկության օրվա գործավարության մատյանը,
- ▶ քվեարկության շենքում գտնվելու իրավունք ունեցող մնացած անձինք տեղեր են զբաղեցնում սեղանից (հաշվողներից) երկու մետր հեռավորության վրա *(Ընտրական օրենսգիրք՝ հոդված 68.3):*

Հանձնաժողովի նախագահը հաշվողների սեղանի մոտ պետք է տանի.

- ▶ ընտրողների միասնական ցուցակը, ընտրողների հատուկ ցուցակը, շրջիկ (տեղափոխվող) քվեատուփի ցուցակը,
- ▶ չօգտագործված ընտրական քվեաթերթիկները,
- ▶ վնասված ընտրական քվեաթերթիկները,
- ▶ հիմնական և շրջիկ (տեղափոխվող) քվեատուփերը,
- ▶ համեմատելու համար պահած ստուգողական թերթը,
- ▶ հաշվիչը




ՄԻՆՉԵՎ ԶՎԵԱՏՈՒՓԻ ԲԱՑՈՒՄԸ ԱՆՑԿԱՑՎԵԼԻՔ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԵՐ

(Ընտրական օրենսգիրք՝ հոդված 67)

Հաշվողները հաջորդականությամբ հաշվում են քվեարկությանը մասնակից ընտրողների ընդհանուր թիվը

(Ընտրական օրենսգիրք՝ հոդված 67.3).

- ▶ ըստ ընտրողների միասնական ցուցակի,
- ▶ ըստ ընտրողների հատուկ ցուցակի,
- ▶ ըստ շրջիկ (տեղափոխվող) քվեատուևիի ցուցակի:



Տեղամասային ընտրական հանձնաժողովի քարտուղարն արդյունքներն անհապաղորեն գրանցում է քվեարկության արդյունքների ցուցադրական արձանագրությունների մեջ և քվեարկության օրվա գործավարության մատյանում:

Տեղամասային ընտրական հանձնաժողովի քարտուղարը կտրում է չօգտագործված ընտրական քվեաթերթիկների անկյունները: Չօգտագործված և վնասված ընտրական քվեաթերթիկները կապում է առանձին-առանձին փաթեթներով (Ընտրական օրենսգիրք՝ հոդված 67.4):

ԸՆՏՐՈՂՆԵՐԻ ՑՈՒՑԱԿՆԵՐԻ, ՉՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԵՎ ՎՆԱՍՎԱԾ ԸՆՏՐԱԿԱՆ ԶՎԵԱԹԵՐԹԻԿՆԵՐԻ ՉՄՈՍԱԿՆԵՐՈՒՄԸ

(Ընտրական օրենսգիրք՝ հոդված 67.3, 67.4–5¹)

Հանձնաժողովի քարտուղարն առանձին-առանձին զմոսակնքում է.

- ▶ ընտրողների միասնական ցուցակը,
- ▶ ընտրողների հատուկ ցուցակը,
- ▶ շրջիկ (տեղափոխվող) քվեատուևիի ցուցակը:

Հաշվողներն առանձին-առանձին գմոսակնքում են.

- ▶ չօգտագործված ընտրական քվեաթերթիկները,
- ▶ վնասված ընտրական քվեաթերթիկները:

Հաշվողները յուրաքանչյուր փաթեթի վրա մատնանշում են ընտրական տեղամասի անվանումը և համարը, ընտրական փաստաթղթերի տեսակը: Ծրարը ստորագրում են հաշվողները և հանձնաժողովի նախագահը:

Նշված ընթացակարգերն ավարտելուն պես, տեղամասային ընտրական հանձնաժողովի քարտուղարը հաշվառում է այն դեպքերի թիվը, որոնք վերաբերում են ընտրողի դեմքի և ներկայացված փաստաթղթում/փաստաթղթերում/ընտրողների ցուցակում առկա լուսանկարների անհամապատասխանությանը, նաև քվեարկության օրվա գործավարության մատյանին կցված փաստաթղթերի քանակին (տվյալները ընդգրկում է գործավարության մատյանում):

Տեղամասային ընտրական հանձնաժողովի քարտուղարը տվյալ փաստաթղթերը գմոսակնքում է, գմոսակնքված փաթեթի վրա նշում է ընտրական տեղամասի անվանումը, համարը, փաստաթղթերի տեսակը և ստորագրում է:

ՇՐՋԻԿ (ՏԵՂԱՓՈԽՎՈՂ) ԶՎԵԱՏՈՒՓԸ ԲԱՑԵԼԸ

(Ընտրական օրենսգիրք՝ հոդված 68.1,2,4)

Հանձնաժողովը սկզբից բացում է շրջիկ (տեղափոխվող) ընտրական քվեատուփը: Հանձնաժողովի նախագահը հանձնաժողովի անդամների և քվեարկության շենքում գտնվելու իրավունք ունեցող անձանց ներկայությամբ ստուգում է քվեատուփի վրա գմոսակնիքի ամբողջականությունը:

ՈՒՇԱԴՐՈՒԹՅՈՒՆ

Եթե քվեատուփի գմոսակնիքի ամբողջականությունը խախտված լինի, բայց հանձնաժողովը համարի, որ դա չի առաջացրել օրենքի պահանջների խախտում, հանձնաժողովի կարգադրությամբ շարունակվում է քվեարկության արդյունքների ամփոփման ընթացակարգը (տվյալ փաստի վերաբերյալ անհապաղորդեն տեղեկացվում է ընտրատարածքային ընտրական հանձնաժողովին): Հակառակ դեպքում, քվեատուփը գմոսակնքվում է և տեղամասային ընտրական հանձնաժողովի կարգադրության հետ միասին անհապաղորդեն փոխանցվում վերադաս ընտրատարածքային ընտրական հանձնաժողովին:

Հաշվողները շրջիկ (տեղափոխվող) քվեատուփում եղած հատուկ ծրարները տեղավորում են սեղանի վրա, որից հետո.

- ▶ ստուգում են շրջիկ (տեղափոխվող) քվեատուփում ստուգողական թերթի առկայությունը,
- ▶ շրջիկ(տեղափոխվող) քվեատուփում առկա ստուգողական թերթը համեմատում են հանձնաժողովում համեմատության նպատակով պահված ստուգողական թերթի հետ,
- ▶ եթե խախտում չի հայտնաբերվում, հանձնաժողովի նախագահը ցուցում է տալ իսկ հաշվողներին՝ ժամանակավորապես հատուկ ծրարները վերադարձնել շրջիկ (տեղափոխվող) քվեատուփի մեջ:



ՈՒՇԱԴՐՈՒԹՅՈՒՆ

Եթե շրջիկ (տեղափոխվող) քվեատուփում չլինի ստուգողական թերթը, կամ ստուգողական թերթերի միջև տարբերություն հայտնաբերվի, բոլոր հատուկ ծրարները և ընտրական քվեաթիկները կապվում են փաթեթով, վրան գրվում է «Անվավեր է»: Ընտրական տեղամասում քվեարկությունը և ձայները հաշվելու ընթացակարգերը ավարտվելուց հետո, փաստաթղթերը փոխանցվում են ընտրատարածքային ընտրական հանձնաժողովին:

ՀԻՄՆԱԿԱՆ ՔՎԵԱՏՈՒՓԸ ԲԱՑԵԼԸ

(Ընտրական օրենսգիրք՝ հոդված 68.1,2,5)

Հանձնաժողովի նախագահը հանձնաժողովի անդամների և քվեարկության շենքում գտնվելու իրավունք ունեցող անձանց ներկայությամբ ստուգում է քվեատուփի զմռսակնիքի ամբողջականությունը:

ՈՒՇԱԴՐՈՒԹՅՈՒՆ

Եթե ընտրական քվեատուփի զմռսակնիքի ամբողջականությունը խախտված լինի, բայց հանձնաժողովը համարի, որ դա չի առաջացրել օրենքի պահանջների խախտում, հանձնաժողովի կարգադրությամբ շարունակվում է քվեարկության արդյունքների ամփոփման ընթացակարգը (տվյալ փաստի վերաբերյալ անհապաղորեն տեղեկացվում է ընտրատարածքային ընտրական հանձնաժողովին): Հակառակ դեպքում, քվեատուփը զմռսակնքվում է և տեղամասային ընտրական հանձնաժողովի կարգադրության հետ միասին անհապաղորեն փոխանցվում է վերադաս ընտրատարածքային ընտրական հանձնաժողովին:

Հաշվողները.

- ▶ հիմնական քվեատուփում առկա հատուկ ծրարները և ընտրական քվեաթիկները տեղադրում են սեղանի վրա,
- ▶ ստուգում են հիմնական քվեատուփում ստուգողական թերթի առկայությունը և այն համեմատում հանձնաժողովում համեմատության նպատակով պահված ստուգողական թերթի հետ:

ՈՒՇԱԴՐՈՒԹՅՈՒՆ

Եթե ստուգողական թերթերի միջև տարբերություն է հայտնաբերվում կամ հիմնական քվեատու-
ուհիում չի լինում ստուգողական թերթը, բոլոր հատուկ ծրարները և ընտրական քվեա-
թերթիկները փաթեթավորվում են, զմռսակնքվում, կազմվում է համապատասխան արձանագ-
րություն և անհապաղորեն փոխանցվում ընտրատարածքային ընտրական հանձնաժողովին:

Ձայները հաշվելու ընթացակարգը.

Հաշվողները տեղ են զբաղեցնում սեղանի նույն կողմում, նրանց կողքին կանգնում
են դիտորդներից որոշված երկու վերահսկող և վիճակահանությամբ որոշված
ընտրական սուբյեկտի երկու ներկայացուցիչները:

ԸՆՏՐԱԿԱՆ ԶՎԵԱԹԵՐԹԻԿՆԵՐԻ ՏԵՍԱԿԱՎՈՐՈՒՄԸ

(Ընտրական օրենսգիրք՝ հոդված 69)

Առաջին հաշվողը.

- ▶ հատուկ ծրարից վերցնում է ընտրական քվեաթերթիկները,
- ▶ ստուգում է ընտրական քվեաթերթիկների վավերականությունը,
- ▶ հայտարարում է՝ ում է տրված ձայնը,
- ▶ մի տեսակի ընտրական քվեաթերթիկը փոխանցում է երկրորդ հաշվողին, երկր-
որդ տեսակինը՝ երրորդ հաշվողին և այլն,
- ▶ հատուկ ծրարն առանձին է դնում:

Հաշվողներն առանձին-առանձին են դասավորում.

- ▶ քվեաթերթիկները՝ ըստ յուրաքանչյուր ընտրական սուբյեկտին տրված ձայների,
- ▶ անվավեր համարված ընտրական քվեաթերթիկները,
- ▶ կասկածելի համարված ընտրական քվեաթերթիկները:



Սահմանված նմուշի ընտրական քվեաթերթիկը միայն այն դեպքում է համարվում անվավեր, եթե.

- ▶ հատուկ ծրարը սահմանված նմուշի չէ,
- ▶ հատուկ ծրարում կա մեկից ավելի միևնույն տեսակի սահմանված քանակից ավելի ընտրական քվեաթերթիկ,
- ▶ ընտրական քվեաթերթիկն ընտրական քվեատուփում հայտնվել է առանց հատուկ ծրարի,
- ▶ ընտրական քվեաթերթիկը վավերացված չէ ընտրողների գրանցում իրականացնողի ստորագրությամբ և գրանցում իրականացնողի կնիքով,
- ▶ անհնար է որոշել, թե ընտրողը որ ընտրական սուբյեկտին է տվել ձայնը,
- ▶ ընտրական քվեաթերթիկը հատկացված էր այլ ընտրական տեղամասի համար (այսպիսի քվեաթերթիկները կապվում են մեկ կապոցով, դրանց թիվը չի նշվում քվեարկության արդյունքների ամփոփիչ արձանագրության/ արձանագրությունների մեջ և նշվում է միայն քվեարկության օրվա գործավարության մատյանում):

Ընտրական քվեաթերթիկների տեսակավորումն ավարտելուց հետո, հանձնաժողովը քննարկում է և քվեարկությամբ վճռում կասկածելի համարված ընտրական քվեաթերթիկների վավերականության հարցը:



Հանձնաժողովի նախագահը վավեր համարված ընտրական քվեաթերթիկը դնում է վավեր քվեաթերթիկների տրցակում (ըստ ընտրական սուբյեկտին տրված ձայնի), իսկ անվավեր համարված ընտրական քվեաթերթիկը՝ անվավեր համարված ընտրական քվեաթերթիկների տրցակում:

ԸՆՏՐԱԿԱՆ ՔՎԵԱԹԵՐԹԻԿՆԵՐԸ ՀԱՇՎԵԼԸ


Ընտրական քվեաթերթիկների տեսակավորումից հետո հանձնաժողովի նախագահը հաշվողներին ցուցում է տալիս՝ հաշվել.

- ▶ անվավեր համարված ընտրական քվեաթերթիկները,
- ▶ յուրաքանչյուր ընտրական սուբյեկտին տրված ձայները:

ՈՒՇԱԴՐՈՒԹՅՈՒՆ

Ընտրական սուբյեկտին պատկանող ամեն 10 ընտրական քվեաթերթիկ կապվում է մետաղյա կապիչով և ամեն կապոցի վրա, ինչպես ամբողջականի, այնպես էլ ոչ ամբողջականի, գրվում է կապած ընտրական քվեաթերթիկների թիվը:

Հանձնաժողովի նախագահը հայտարարում է յուրաքանչյուր ընտրական սուբյեկտի ստացած ձայների քանակը: Հանձնաժողովի քարտուղարը հանձնաժողովի նախագահի հետ, տվյալների ճշգրտությունը վերստուգելու նպատակով ստուգում է.



Եթե ընտրական սուբյեկտների կողմից ստացած ձայների և անվավեր ընտրական քվեաթերթիկների գումարն ավելի է ընտրողների ստորագրությունների քանակից, հանձնաժողովի նախագահը հաշվողներին ցուցում է տալիս վերահաշվել տվյալները, որից հետո հանձնաժողովի քարտուղարն արդյունքները գրառում է քվեարկության օրվա գործավարության մատյանում և քվեարկության արդյունքների ցուցադրական արձանագրությունների մեջ:

ԸՆՏՐԱԿԱՆ ԶՎԵԱԹԵՐԹԻԿՆԵՐԻ ՉՄԱԿՆՔՈՒՄԸ

(Ընտրական օրենսգիրք՝ հոդված 69.6,9)


Ընտրական քվեաթերթիկները հաշվելուց հետո, հանձնաժողովի նախագահը հաշվողներին ցուցում է տալիս՝ առանձին-առանձին փաթեթներով զմուսակնքել.

- ▶ անվավեր քվեաթերթիկները (դրանց վրա գրվում է՝ «Անվավեր է»),
- ▶ ընտրական սուբյեկտին պատկանող ընտրական քվեաթերթիկների տրցակը:

ՈՒՇԱԴՐՈՒԹՅՈՒՆ

Ընտրական սուբյեկտին պատկանող ընտրական քվեաթերթիկների տրցակի վրա պետք է նշվի ընտրական տեղամասի անվանումը և համարը, ընտրական սուբյեկտի տվյալները (անվանում, անուն և ազգանուն) և նրա ստացած ձայների քանակը, նաև տրցակում դրված ընտրական քվեաթերթիկների քանակը:

Յուրաքանչյուր փաթեթի վրա հաշվողները մատնանշում են ընտրատարածքի և ընտրատեղամասի համարները, ընտրական քվեաթերթիկների տեսակը և քանակը: Փաթեթի զմուսակնքման գծի վրա ստորագրում են հաշվողները և հանձնաժողովի նախագահը:



ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ԱՄՓՈՓԻՉ ԱՐԶԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱԶՄՈՒՄԸ

(Ընտրական օրենսգիրք՝ հոդված 70-71)

Տեղամասային ընտրական հանձնաժողովի քարտուղարը, ընտրական քվեաթերթիկների զմուսակնքումից հետո, տեղամասային ընտրական հանձնաժողովի նախագահի հետ համաձայնեցմամբ, լրացնում է քվեարկության արդյունքների ամփոփիչ արձանագրությունները:



Հանձնաժողովի բոլոր անդամները պարտավոր են ստորագրել քվեարկության արդյունքների ամփոփիչ արձանագրությունները, իսկ այն դեպքում, եթե հանձնաժողովի անդամը չի համաձայնում քվեարկության արդյունքների ամփոփիչ արձանագրությունում տեղ գտած տվյալների հետ, նա իրավունք ունի, արձանագրություններին գրավոր կցել իր տարբերվող կարծիքը: Քվեարկության արդյունքների ամփոփիչ արձանագրությունները վավերացվում են տեղամասային ընտրական հանձնաժողովի հատուկ կնիքով:

Արգելվում է քվեարկության արդյունքների ամփոփիչ արձանագրություններում տեղ գտած տվյալներն ուղղել: Եթե ամփոփիչ արձանագրությունը լրացնելիս սխալ է թույլ տրվել, սխալն ուղղելու համար քվեարկության արդյունքների ամփոփիչ արձանագրության մեջ համապատասխան տվյալների երկայնքով արվում է գրառում «Ուղղված է»: Ընտրական հանձնաժողովի քարտուղարը պետք է կազմի սխալն ուղղելու արձանագրություն, որում կնշվի ամփոփիչ արձանագրության մեջ

կատարված տվյալի ուղղումը և այդ արձանագրությունը կազմելու ամսաթիվ, ամիս, տարեթիվը և ժամը: Ընտրական հանձնաժողովի նիստին ներկա ընտրական հանձնաժողովի բոլոր անդամները պարտավոր են ստորագրել արձանագրությունը: Ուղղման արձանագրությունը կկնքվի ընտրական հանձնաժողովի կնիքով, կգրանցվի գրանցամատյանում և քվեարկության օրվա գործավարության մատյանում և կկցվի այն ամփոփիչ արձանագրությանը, որում տեղ գտած տվյալն ուղղվել է:



ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ԱՄՓՈՓԻՉ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՀՐԱՊԱՐԱԿԱՅՆՈՒԹՅՈՒՆԸ

(Ընտրական օրենսգիրք՝ հոդված 71.8)

Հանձնաժողովը պարտավոր է քվեարկության արդյունքների ամփոփիչ արձանագրությունների ֆոտոպատճենները փակցնել հրապարակային ծանոթացման համար:

Տեղամասային ընտրական հանձնաժողովը քվեարկության արդյունքների ամփոփիչ արձանագրությունների ֆոտո պատճենները, հանձնաժողովի անդամների՝ տարբերվող կարծիքներով (այսպիսինի գոյության դեպքում), պահանջելու դեպքում անհապաղորեն փոխանցում է քվեարկության շենքում գտնվելու իրավունք ունեցող բոլոր անձանց:


Քվեարկության արդյունքների ամփոփիչ արձանագրությունների ֆոտոպատճենները պետք է վավերացվեն հանձնաժողովի հատուկ կնիքով, հանձնաժողովի նախագահի և քարտուղարի ստորագրություններով: Ստացող անձը քվեարկության արդյունքների ամփոփիչ արձանագրությունների ֆոտո պատճենները ստանալը հաստատում է քվեարկության օրվա գործավարության մատյանում արված ստորագրությամբ:

Հանձնաժողովը պարտավոր է քվեարկության արդյունքների ամփոփիչ արձանագրությունների ֆոտոպատճենները, անճշտություններն ուղղելու արձանագրությունները, գրանցումն իրականացնողների գրավոր բացատրագրերի հետ (այսպիսինի գոյության դեպքում) իր ձեռքի տակ եղած տեխնիկական միջոցներով անհապաղորեն ուղարկել ԿԸՀ-ին:

ԳՐԱՆՑԱՄԱՏՅԱՆԻ ՓԱԿԵԸ, ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆ ՕՐՎԱ ԳՈՐԾԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՄԱՏՅԱՆԻ ՉՄՈՍԱԿՆԵՈՒՄԸ, ԸՆՏՐԱԿԱՆ ՓԱՍՏԱԹՐԹԵՐԻ ՓՈԽԱՆՑՈՒՄԸ ԸՆՏՐԱՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԸՆՏՐԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻՆ

Բոլոր ընթացակարգերն ավարտելուց հետո, փակվում են հանձնաժողովի գրանցամ-

ատյանը և գործավարության մատյանը, այն ստորագրում են հանձնաժողովի նախագահը, հանձնաժողովի քարտուղարը և վավերացվում է հանձնաժողովի հատուկ կնիքով:



Հանձնաժողովը զմուսակնքում է.

- ▶ քվեարկության օրվա գործավարության մատյանը և դիմումները /բողոքները,
- ▶ տեղամասային ընտրական հանձնաժողովի հատուկ կնիքը (հանձնաժողովի հատուկ կնիքի զմուսակնքված փաթեթը ստորագրում են հանձնաժողովի բոլոր անդամները):

ՈՒՇԱԴՐՈՒԹՅՈՒՆ

Քվեարկության արդյունքների ամփոփիչ արձանագրությունները և գրանցամատյանը չեն զմուսակնքվում:

Հանձնաժողովի իրավագոր անձինք ընտրատարածքային ընտրական հանձնաժողովին են փոխանցում ընտրական պարագաները, նյութերը և ընտրական փաստաթղթերի տուփը / տոպրակը, որում գետեղված են զմուսակնքված ընտրական փաստաթղթերը: Դրա հետ կապված՝ կազմվում է հանձնման-ընդունման ակտ: Հանձնման-ընդունման ակտը ստորագրում են ընտրական փաստաթղթերը տրամադրող և ընդունող անձինք, որից հետո յուրաքանչյուրին փոխանցվում է տվյալ ակտի մեկական օրինակ:



ՄԱՍ IV

ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆ ՕՐԿԱ
ԴԻՄՈՒՄՆԵՐԸ/ԲՈՂՈՔՆԵՐԸ

ԳԼՈՒԽ I. ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆ ՅՐԿԱ ԴԻՄՈՒՄՆԵՐԻ/ԲՈՂՈՔՆԵՐԻ ԳՐԱՆՕՑՈՒՄԸ

Տեղամասային և վերադաս ընտրատարածքային ընտրական հանձնաժողովներում կուսակցության/ընտրական դաշինքի/ընտրողների նախաձեռնող խմբի ներկայացուցիչը, դիտորդը իրավունք ունի.

- ▶ դիմում/բողոք փոխանցել տեղամասային ընտրական հանձնաժողովի նախագահին, հանձնաժողովի նախագահի տեղակալին կամ հանձնաժողովի քարտուղարին (Հավելված №2),
- ▶ քվեարկության օրը ընտրական ընթացակարգերի հետ կապված դժգոհությունները, բողոքները և դիտողությունները գրանցել քվեարկության օրվա գործավարության մատյանում (10-րդ և հաջորդ էջերում):

ՈՒՇԱԴՐՈՒԹՅՈՒՆ

- ▶ Ոչ-ոք իրավունք չունի խանգարել քվեարկության շենքում գտնվելու իրավունք ունեցող անձին քվեարկության օրվա գործավարության մատյանում գրանցել դժգոհություն, դիտողություն կամ բողոք (*Ընտրական օրենսգիրք՝ հոդված 62.10*):
- ▶ Քվեարկության օրվա գործավարության մատյանում գրառում անող անձը պարտավոր է մատնանշել իր ազգանունը, անունը և հասցեն (ըստ Վրաստանի քաղաքացու ինքնությունը հաստատող վկայականի):

Հանձնաժողովի քարտուղարը դիմումը/բողոքը գրանցում է գործավարության մատյանի մտից փաստաթղթերի մասում, դիմումատուին/բողոքարկողին տեղեկանք է տրամադրում, որում նշվում է դիմումը/բողոքը ընդունելու ամսաթիվը, ժամը և գրանցման համարը: Հանձնաժողովի քարտուղարը տեղեկանքը վավերացնում է ստորագրությամբ (Հավելված №3):

Բողոքների գրանցման գործընթացը դիտարկելու նպատակով վիճակահանությամբ որոշված ընտրական սուբյեկտների ներկայացուցիչների կողմից խախտումների արձանագրման դեպքում, բողոքի գրանցման հետ կապված որոշումն ընդունում է հանձնաժողովը:

ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆ ՕՐԿԱ ԴԻՄՈՒՄՆԵՐՈՒՄ / ԲՈՂՈՔՆԵՐՈՒՄ ԱՆՃՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՈՐՈՇՄԱՆ ԿԱՐԳԸ

Տեղամասային ընտրական հանձնաժողովի քարտուղարը, հանձնաժողովի նախագահը կամ հանձնաժողովի նախագահի տեղակալը որոշում են դիմում / բողոք ներկայացնողի թույլ տված անճշտությունը և խելամիտ ժամկետ սահմանում դրա լրացման համար, **եթե դիմումը/բողոքը չի պարունակում.**

- ▶ դիմումը/բողոքը կազմելու ամսաթիվը և ժամը,
- ▶ դիմումատուի/բողոքողի անունը, ազգանունը և հաշվառման վայրը,
- ▶ ընտրական տեղամասի համարը,
- ▶ վկայի առկայության դեպքում՝ նրա անունը, ազգանունը և գրանցման վայրը:

Դիմումատուն/բողոքողը իրավունք ունի սահմանված ժամկետում լրացնել թերությունը համանման դիմում/բողոք ներկայացնելու միջոցով, կամ ներկայացնել նոր դիմում (որտեղ կնշվեն այն տվյալները, որոնց պատճառով էլ սահմանվել էր նրա թերությունը):

Հանձնաժողովի քարտուղարը գրանցամատյանում անում է «թերություն» գրառումը: Գրառման երկայնքով ստորագրում են դիմումը/բողոքը ներկայացնողը և հանձնաժողովի քարտուղարը:

ՈՒՇԱԴՐՈՒԹՅՈՒՆ

Թերությունը լրացնելու ժամկետը սահմանվում է կողմերի համաձայնության հիման վրա: Թերությունը լրացնելու ժամկետի վերաբերյալ կողմերի անհամաձայնության դեպքում, ժամկետը միանձնյա սահմանում է դիմումը/բողոքը ընդունող անձը:

Թերությունը լրացնելու դեպքում, հանձնաժողովի քարտուղարը, հանձնաժողովի նախագահը կամ հանձնաժողովի նախագահի տեղակալը գրանցամատյանում գրում է «լրացված է» և նշում թերությունը լրացնելու ճշգրիտ ժամանակը և ամսաթիվը: Գրառման երկայնքով ստորագրում են դիմումը/բողոքը ներկայացնողը և հանձնաժողովի համապատասխան պաշտոնեական անձը:

ՈՒՇԱԴՐՈՒԹՅՈՒՆ

Սահմանված ժամկետում թերությունը չլրացնելու դեպքում, դիմումը/բողոքը չի քննարկվում, ինչի մասին տեղամասային ընտրական հանձնաժողովը կարգադրություն է հրապարակում (կարգադրության վերնագրում պետք է մատնանշվի դիմումը/բողոքը առանց քննարկման թողնելու կոնկրետ պատճառը):

ԳԼՈՒԽ II. ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆ ՑՐՎԱ ԴԻՄՈՒՄՆԵՐԻՆ/ ԲՈՂՈՔՆԵՐԻՆ ԱՐՁՕԱԳԱՆՔՈՒՄԸ

Հանձնաժողովին ախազահը պարտավորեան հապաղորեն համապատասխանաբար արձագանքել այն դիմումին/բողոքին, որը վերաբերում է քվեարկության օրվա ժամը 7-ից մինչև քվեատուլի բացումը անցկացված ընթացակարգերի խախտմանը, և վերացնել առկա խախտումը:

Խախտումը վերացնելու դեպքում քվեարկության օրվա գործավարության մատյանում կատարվում է համապատասխան գրառում՝ «խախտումը վերացված է», և նշվում ճշգրիտ ժամանակը:

Դիմումը/բողոքը, որը վերաբերում է ձայների հաշվմանը և քվեարկության արդյունքների ամփոփման ընթացակարգերի խախտմանը, տեղամասային ընտրական հանձնաժողովը չի քննարկում և քվեարկության օրվանից 2 օրացուցային օրվա ընթացքում փոխանցում է ընտրատարածքային ընտրական հանձնաժողովին:

Ներկայացված դիմում/բողոքը չի քննարկվում և տեղամասային ընտրական հանձնաժողովը կարգադրություն է հրապարակում դիմումը/բողոքը առանց քննարկման թողնելու վերաբերյալ, եթե.

- ▶ դիմումը/բողոքը կազմված է ոչ իրավագոր անձի կողմից,
- ▶ դիմումի/բողոքի մեջ չի նշված խախտման էությունը և այն կատարելու ժամանակը,
- ▶ դիմումը/բողոքը ընտրական հանձնաժողովին է փոխանցվել օրենքով պահանջված ժամկետների խախտմամբ,
- ▶ սահմանված ժամկետում չի լրացվել ներկայացված դիմումի/բողոքի թերությունը:

Կարգադրության վերնագրում պետք է մատնանշվի դիմումը/բողոքը առանց քննարկման թողնելու կոնկրետ պատճառը:

ՀԱՎԵԼՎԱԾ №1

Հաստատված է Վրաստանի Կենտրոնական ընտրական հանձնաժողովի

2012 թվականի մարտի 9-ի №14/2012 որոշմամբ

Ընտրական վարչության պաշտոնյաների էթիկայի կանոնագիրք

Հոդված 1. Ընդհանուր դրույթներ

Ընտրական վարչության պաշտոնյաների էթիկայի կանոնագիրքը (հետագայում՝ «Կանոնագիրք») սահմանում է վարքի կանոնները, որոնք պարտադիր են ընտրական վարչության ցանկացած պաշտոնյայի համար:

Հոդված 2. Կանոնագրքի իրավական հիմունքները

Սույն Կանոնագրքի իրավական հիմունքներն են՝ Վրաստանի Սահմանադրությունը, Վրաստանի «Վրաստանի ընտրական օրենսգիրք» օրգանական օրենքը (հետագայում՝ «Ընտրական օրենսգիրք»), Վրաստանի օրենսդրական և օրենքին ենթակա նորմատիվ ակտերը:

Հոդված 3. Տերմինների բացատրությունը

Սույն Կանոնագրքի նպատակների համար նրանում կիրառված տերմիններն ունեն հետևյալ նշանակությունը.

- ա) Ընտրական վարչություն՝ ԿԸՀ, ԿԸՀ-ի աշխատակազմ, ԳԸՀ, ԳԸՀ-ի աշխատակազմ, ընտրատարածքային և տեղամասային ընտրական հանձնաժողովներ,
- բ) Ընտանիքի անդամ՝ պաշտոնյայի ամուսինը, զավակը, խորթ երեխան, ուղիղ վերընթաց և վայրընթաց ճյուղի բարեկամները, քույրը և եղբայրը, ինչպես նաև նրա հետ մշտապես բնակվող անձը:

Հոդված 4. Կանոնագրքի նպատակները, խնդիրները և գործողության բնագավառը

1. Կանոնագրքի նպատակն է նպաստել հասարակության մեջ ընտրական վարչության հեղինակության բարձրացմանը, ընտրական վարչության հանդեպ հասարակության անդամների վստահության ամրապնդմանը, ընտրական գործընթացի մեջ ներգրավված կողմերի հանդեպ վարքի սույն կանոնների պահպանմանն ու հաստատմանը:
2. Կանոնագրքի խնդիրն է ծառայողների մասնագիտական վարքականոնի նորմերի հանդեպ հավատարմության, բարձր բարոյականության ամրապնդումը և ծառայողական պարտականությունների հետ կապված անձնական պատասխանատվության զգացման բարձրացումը:
3. Կանոնագրքի գործողությունը տարածվում է ընտրական վարչությունում զբաղված պաշտոնյաների վրա:

Հոդված 5. Ընտրական վարչության պաշտոնյաների (հետագայում՝ պաշտոնյաների) գործունեության հիմնական սկզբունքները

Պաշտոնյան պարտավոր է.

1. Հարգել Օրենքը.

Ապահովել Ընտրական օրենսդրության ճշգրիտ և հետևողական իրականացում, գործառնությունները կատարելիս լինել անկախ, բարեխիղճ և անկողմնակալ:

2. Լինել արդարացի, անկողմնակալ և անկախ.

- ա) ապահովել ընտրական սուբյեկտների, ընտրողների և ընտրական գործընթացին մասնակցող այլ անձանց համար հավասար և արդարացի միջավայրի ստեղծում,
- բ) խուսափել այնպիսի գործողությունից, որը կարող է ընկալվել որպես որևէ կուսակցության կամ ընտրական սուբյեկտի աջակցություն կամ նրան հակառակ գործողություն,
- գ) պաշտոնյայի ընտանիքի անդամի, որպես ընտրական սուբյեկտ գրանցման դեպքում, 5 աշխատանքային օրվա ժամկետում վերադաս ընտրական հանձնաժողով կամ/և ԿԸՀ ներկայացնել գրավոր դիմում, որի նշված ժամկետում չներկայացնելը կարող է դառնալ կարգապահական պատասխանատվության ենթարկման հիմունք,
- դ) չընդունել նվեր կամ որևէ շահույթ քաղաքական կուսակցությունից, կազմակերպությունից կամ այն անձից, որն ընդգրկված է ընտրական գործընթացի մեջ,
- ե) ընտրական ժամանակամիջոցում ներկա չգտնվել ընդունելությունների, բանկետների կամ տոնական միջոցառումների, որոնք կազմակերպված են քաղաքական կուսակցության, կազմակերպության կամ այն անձի կողմից, որն ընդգրկված է ընտրական գործընթացի մեջ,
- զ) ընտրական ժամանակամիջոցում խուսափել տեղական կամ պետական իշխանության պաշտոնեական անձանց հետ անձնական բնույթի հանդիպումներից և նրանց այցելելուց:

3. Գործել թափանցիկ.

Օժանդակել շահագրգիռ կողմերին ընտրական գործընթացի կամ ընտրական վարչության գործունեության հետ կապված տեղեկատվության և փաստաթղթեր ստանալու հարցում (բացառությամբ ընտրացուցակներում անձնական համար պարունակող տեղեկատվության):

4. Լինել պրոֆեսիոնալ, կարգավորված և ճշտապահ.

- ա) մասնակցել իր համար անցկացվող վարժանք-դասընթացներին և մանրակրկիտ կերպով ուսումնասիրել ընտրական ընթացակարգերը,
- բ) թույլ չտալ ծառայողական ժամանակի և գույքի օգտագործում ոչ ծառայողական նպատակներով,
- գ) լինել շփվող և խուսափել անձնական թե՛ այլ կարգի բախումների առաջացումից կամ դրանց բորբոքումից,
- դ) սեփական կարծիքների արտահայտման ժամանակ նրբանկատորեն արտահայտել հիմնավորված քննադատությունը,
- ե) լինել ճշտապահ և գործել Օրենքով սահմանված ժամկետների համապատասխան:

Հոդված 6. Պատասխանատվությունը սույն Կանոնագրքի պահանջների խախտման համար

1. Սույն Կանոնագրքով սահմանված պահանջների խախտումը կարգապահական խախտում է, և դրա համար ընտրական վարչության պաշտոնյան կարող է պատասխանատվության ենթարկվել Ընտրական օրենսգրքով և «Հանրային ծառայության մասին» Վրաստանի օրենքներով սահմանված կարգով:
2. Ընտրական վարչության այն պաշտոնյաները, որոնք հանրային ծառայողներ չեն և նրանց վրա չի տարածվում «Հանրային ծառայության մասին» օրենքը, սույն Կանոնագրքի պահանջների խախտման համար պատասխան են տալիս Ընտրական օրենսգրքով սահմանված չափերին համապատասխան և կարգով:

ՀԱՎԵԼՎԱԾ №2

Ընտրական հանձնաժողով ներկայացված դիմումի/բողոքի ռեկվիզիտները

Դիմումի/բողոքի մեջ նշվում է.

- ✓ դիմումը/բողոքը կազմելու ամսաթիվ, ամիսը, տարեթիվը և ժամանակը*,
- ✓ դիմումատուի/բողոքողի անունը, ազգանունը և հաշվառման վայրը*,
- ✓ ընտրական տեղամասի համարը*,
- ✓ վկայի առկայության դեպքում՝ նրա անունը, ազգանունը և հաշվառման վայրը*,
- ✓ խախտման էությունը և այն թույլ տալու ժամանակը**,
- ✓ խախտողին որոշելու դեպքում՝ նրա այն տվյալները, որոնք հնարավոր դարձան որոշել**,
- ✓ խախտողի բացատրագիրը (այսպիսինի գոյության դեպքում)**,
- ✓ դիմումատուի/բողոքողի կոնտակտային հեռախոսահամարը (բնակման վայրի կամ/և բջջայինի)***,
- ✓ դիմումատուի/բողոքողի ֆաքսի համարը և էլեկտրոնային փոստի հասցեն (դրանց առկայության դեպքում)***,
- ✓ այլ լրացուցիչ տեղեկություններ:

* Տվյալ ռեկվիզիտների ոչ ճշգրիտ կամ ոչ լիարժեք մատնանշումը դիմումի/բողոքի մասին թերության սահմանման հիմունք է, իսկ թերությունը չուղղելու դեպքում՝ այն առանց քննարկման թողնելու հիմունք:

** Տվյալ ռեկվիզիտները չնշելը, առանց թերությունը որոշելու՝ դիմումը/բողոքը առանց քննարկման թողնելու հիմունք է:

*** Տվյալ ռեկվիզիտների ոչ ճշգրիտ կամ ոչ լիարժեք մատնանշումը չի կարող դառնալ դիմումի/բողոքի թերության սահմանման և այն առանց քննարկման թողնելու հիմունք, սակայն կարող է դառնալ կողմին՝ բողոքի քննարկման հրավիրելու անհնարինության հիմունք:

ՀԱՎԵԼՎԱԾ №3

№ «.....».....ընտրատարածք

№ «.....»..... տեղամասային ընտրական հանձնաժողով

Տեղեկանք

Դիմումի/բողոքի գրանցման վերաբերյալ

Դիմումը/բողոքը ընդունելու ամսաթիվ, ամիս, տարեթիվ.

Դիմումը/բողոքը ընդունելու ժամանակը.

Դիմումի/բողոքի գրանցման համարը.

Հանձնաժողովի քարտուղար՝

.....
/ստորագրություն/

ՀԱՎԵԼՎԱԾ №4

Տեղամասային ընտրական հանձնաժողովի նախագահի լիազորությունները

1. Տեղամասային ընտրական հանձնաժողովի նիստի հետ կապված լիազորություններ.

- ▶ Հրավիրում էք տեղամասային ընտրական հանձնաժողովի նիստ *(Ընտրական օրենսգիրք՝ հոդված 8.2):*
- ▶ Վարում էք տեղամասային ընտրական հանձնաժողովի նիստը *(Ընտրական օրենսգիրք՝ հոդված 27.1.բ):*

2. Վարչական գործառնություններ.

- ▶ Իրավունք ունեք առաջադրանքներ տալ հանձնաժողովի նախագահի տեղակալին, հանձնաժողովի քարտուղարին և հանձնաժողովի այլ անդամների *(Ընտրական օրենսգիրք՝ հոդված 27.1.ե):*
- ▶ Իրավունք ունեք հրապարակել կարգադրություն *(Ընտրական օրենսգիրք՝ հոդված 30.1.գ):*
- ▶ Ստանում էք և Ձեր մակագրությամբ բաժանում տեղամասային ընտրական հանձնաժողով մտած ընտրական փաստաթղթերը և տեղամասային ընտրական հանձնաժողովի անունով մտից գրագրությունը *(Ընտրական օրենսգիրք՝ հոդված 27.1.գ):*
- ▶ Պատասխանատու էք ընտրատարածքային ընտրական հանձնաժողովից ընտրական փաստաթղթերի, գույքի և այլ նյութերի ընդունման, պահպանման և ըստ նշանակման տրամադրման համար *(Ընտրական օրենսգիրք՝ հոդված 27.1.դ, հոդված 63.6):*
- ▶ Հրապարակայնության ապահովման համար նկատի՝ ունեցեք, որ ընտրական տեղամասում բոլորի համար տեսանելի տեղում պետք է փակցված լինեն *(Տեղամասային ընտրական հանձնաժողովի կանոնակարգ՝ հոդված 8):*

- ☐ Տեղամասային ընտրական հանձնաժողովի կոնտակտային հեռախոսի և ֆաքսի համարները և այլ տվյալներ,
- ☐ ընտրական վարչակազմի այն իրավական ակտերը, որոնք կվերաբերեն տեղամասային ընտրական հանձնաժողովի գործունեությանը,
- ☐ տեղամասային ընտրական հանձնաժողովի նախագահի կարգադրությունները,
- ☐ ընտրողների ցուցակները, ընտրողների ցուցակներում փոփոխությունների ընդգրկման և անճշտությունների բողոքարկման կարգը և ժամկետները:

ՈՒՇԱԴՐՈՒԹՅՈՒՆ

- ▶ Քվեարկության օրվանից առնվազն երկու օր առաջ Ձեզ կփոխանցվեն ճշգրտված ցուցակների վերջնական տարբերակները (ընտրական հանձնաժողովի համար հատկացված տարբերակը՝ սեղանի ցուցակը, և հանրային տեղեկատվության համար հատկացված տարբերակը՝ պատի ցուցակը) *(Ընտրական օրենսգիրք՝ հոդված 31.11):*
- ▶ Հանրային տեղեկատվության համար հատկացված պատի ցուցակի նախնական տարբերակը պետք է հանք և նույն տեղում փակցնեք ճշգրտված տարբերակը:

**Տեղամասային ընտրական հանձնաժողովի նախագահի լիազորությունները քվեարկության
նախորդ օրը
(7 հոկտեմբերի)**

1. Քվեարկության շենքի կազմակերպման հետ կապված լիազորություններ.

- ▶ պատասխանատու էք քվեարկության շենքի կազմակերպման համար, նկատի՝ ունեցեք *(Ընտրական օրենսգիրք՝ հոդված 58.4)*,
- ☐ քվեարկության շենքում յուրաքանչյուր 500 ընտրողի համար պետք է կազմակերպվի առնվազն մեկ քվեախցիկ, որտեղ պետք է լինի մեկ գրիչ,
- ☐ պետք է տեղեր առանձնացվեն ընտրողների գրանցման համար և տեղադրվեն սեղաններ՝ գրանցում իրականացնող անձանց քանակին համապատասխան,
- ☐ տեսանելի տեղում պետք է տեղադրվի ընտրական քվեատուփը,
- ☐ ընտրական քվեատուփի մոտ պետք է տեղադրվի սեղան՝ հատուկ ծրարների համար:
- ▶ Քվեարկության շենքում տեսանելի տեղում պետք է փակցված լինեն *(Ընտրական օրենսգիրք՝ հոդված 58.4.դ, 58.5)*.
- ☐ ընտրողների միասնական ցուցակի հանրային տեղեկատվության համար հատկացված տարբերակը (պատի ցուցակը),
- ☐ ընտրողների հատուկ ցուցակի հանրային տեղեկատվության համար հատկացված տարբերակը (պատի ցուցակը),
- ☐ շրջիկ (տեղափոխվող) քվեատուփի ցուցակի հանրային տեղեկատվության համար հատկացված տարբերակը (պատի ցուցակը),
- ☐ թեկնածուների ցուցակները,
- ☐ կուսակցական ցուցակները,
- ☐ քվեարկության հրահանգը և ԿԸՀ-ի կողմից սահմանված, ընտրական քվեաթերթիկների լրացման կարգը,
- ☐ քաղվածք Օրենքից, թե որ դեպքում է ընտրական քվեաթերթիկն անվավեր,
- ☐ քվեարկության արդյունքների ցուցադրական արձանագրությունները,
- ☐ եթե ընտրական քվեաթերթի մեջ ներառված որևէ ընտրական սուբյեկտ այլևս չի մասնակցում ընտրություններին, քվեարկության շենքում և գաղտնի քվեախցերում հայտարարություն այդ մասին:

2. Ընտրական փաստաթղթերի ընդունման հետ կապված լիազորություններ.

Հիշեցե՛ք. քվեարկությունը սկսվելուց ոչ ուշ, քան 12 ժամ առաջ ընտրատարածքային ընտրական հանձնաժողովից պետք է ստանաք ընտրական քվեաթերթիկները և հատուկ ծրարները: Ստանալիս **անպայման հաշվե՛ք** և համեմատե՛ք փոխանցված ընտրական քվեաթերթիկների և հատուկ ծրարների քանակությունը հանձնման-ընդունման ակտում տեղ գտած տվյալների հետ *(Ընտրական օրենսգիրք՝ հոդված 63.9–11)*: Ստուգե՛ք, որ քվեաթերթիկների վրա նշված լինի Ձեր ընտրական տեղամասի և ընտրատարածքի համարը:

**Տեղամասային ընտրական հանձնաժողովի նախագահի լիազորությունները քվեարկության օրը
(8 հոկտեմբերի)**

Ժամը 07:00-08:00

- ☐ Ժամը 07:00-ին բացե՛ք ընտրական տեղամասը, ընտրատարածքային ընտրական հանձնաժողովին տեղեկացրե՛ք ընտրական տեղամասը բացելու և հանձնաժողովի անդամների քվորումի (7 անդամ) մասին *(Ընտրական օրենսգիրք՝ հոդված 61.1):*

- ☐ Հանձնաժողովի քարտուղարին փոխանցե՛ք քվեարկության օրվա գործավարության մատյանը, գրանցամատյանը, քվեարկության արդյունքների ամփոփիչ արձանագրությունները և ցուցադրական արձանագրությունները (փակցվում է բոլորի համար տեսանելի տեղում):

- ☐ Ստուգե՛ք քվեարկության շենքում գտնվող իրավասու անձանց հավատարմագրման վկայականները (ուժի մեջ է անձը հաստատող վկայականի հետ):

- ☐ Ի ցույց բոլորի, ստուգե՛ք այն փաթեթի ամբողջականությունը, որում զետեղված է հանձնաժողովի հատուկ կնիքը և բացե՛ք այն (կնիքի համարը նշե՛ք քվեարկության օրվա գործավարության մատյանի 9-րդ էջում) *(Ընտրական օրենսգիրք՝ հոդված 61.2.բ):*

- ☐ Շրջիկ (տեղափոխվող) քվեատուփը տանող հանձնաժողովի 2 անդամների բացահայտման համար անցկացրե՛ք վիճակահանություն, որին մասնակցում են կուսակցությունների կողմից նշանակված հանձնաժողովի անդամները *(Ընտրական օրենսգիրք՝ հոդված 61.2.դ):*

- ☐ Անցկացրե՛ք վիճակահանություն հանձնաժողովի անդամների միջև՝ մնացած գործառնությունների (ընտրողների հոսքը կարգավորող, ընտրողների գրանցում իրականացնող, քվեատուփը և հատուկ ծրարները վերահսկող հանձնաժողովի անդամներ) բաշխման համար *(Ընտրական օրենսգիրք՝ հոդված 61.2.ե):*

- ☐ Բողոքների գրանցման գործընթացի դիտարկման նպատակով վիճակահանություն անցկացրե՛ք ընտրական տեղամասում գտնվող ընտրական սուբյեկտների ներկայացուցիչներից առավելագույնը 2 ներկայացուցչի որոշման համար: Հիշեցե՛ք՝ վիճակահանությամբ որոշված ներկայացուցիչները և հանձնաժողովի քարտուղարը չի կարելի, որ լինեն միևնույն ընտրական սուբյեկտի կողմից ներկայացված անձինք *(Ընտրական օրենսգիրք՝ հոդված 61.5):*

- ☐ Հանձնաժողովի քարտուղարին խնդրե՛ք հայտարարել ընտրողների թիվը ընտրողների ընդհանուր ցուցակում, ընտրողների հատուկ ցուցակում, նաև շրջիկ (տեղափոխվող) քվեատուփի ցուցակում (այսպիսինի գոյության դեպքում) *(Ընտրական օրենսգիրք՝ հոդված 61.6.ա, հոդված 61.9):*

- ☐ Հանձնաժողովի քարտուղարին խնդրե՛ք հայտարարել ստացած ընտրական քվեաթերթիկների և հատուկ ծրարների քանակությունները *(Ընտրական օրենսգիրք՝ հոդված 61.6.բ, հոդված 61.9):*

- ☐ Ստուգե՛ք, որ ընտրական քվեատուփերը դատարկ լինեն՝ և՛ հիմնականը, և՛ շրջիկը (տեղափոխվող), քվեատուփերը զմոսակնքե՛ք անհատական համար ունեցող զմոսակնիքով *(Ընտրական օրենսգիրք՝ հոդված 61.6.գ):*

- ☐ Ընտրողների՝ յուրաքանչյուր գրանցում իրականացնողի փոխանցե՛ք. ցուցակ՝ 300-ընտրողով (ընտրողների գրանցում իրականացնողներից մեկին փոխանցե՛ք նաև՝ ընտրողների հատուկ ցուցակ), ընտրական քվեաթերթիկների մեկական նոթատետր, նշմարման հեղուկ, գրանցում իրականացնողի կնիք (կնիքի համարը նշե՛ք քվեարկության օրվա գործավարության մատյանի 9-րդ էջում) (*Ընտրական օրենսգիրք՝ հոդված 61.7*):

- ☐ Ընտրողների հոսքը կարգավորողին փոխանցե՛ք նշմարումը ստուգելու ուղտրամանուշակագույն լապտեր:

- ☐ Քվեատուփը և հատուկ ծրարները վերահսկողին փոխանցե՛ք հատուկ ծրարները և հիմնական ընտրական քվեատուփը:

- ☐ Հանձնաժողովի անդամներին նյութերը փոխանցելուց հետո, անհապաղորեն, մինչև քվեարկության սկսվելը, հանձնաժողովի քարտուղարի հետ լրացրե՛ք ստուգողական թերթի ինքնապատճենվող ձևաթուղթը (բացառությամբ առաջին ընտրողի մասին տվյալների): Ուշադրությո՛ւն դարձրե՛ք, որ ստուգողական թերթը ստորագրեն հանձնաժողովի բոլոր ներկա գտնվող անդամները (*Ընտրական օրենսգիրք՝ հոդված 61.10*):

Ժամը 08:00-ից

- ☐ Ընտրական տեղամաս տեղամաս եկած առաջին ընտրողն անցնում է գրանցումը և ստանում ընտրական քվեաթերթիկը/քվեաթերթիկները: Դրանից հետո ցուցն՝ տվե՛ք հանձնաժողովի քարտուղարին, որ առաջին ընտրողի մասին տվյալները գրանցի ստուգողական թերթի վրա, ստորագրել տա նրան և նշի ընտրական քվեատուփերի մեջ ստուգողական թերթերը գցելու ճշգրիտ ժամանակը: Ստուգողական թերթի մեկ օրինակը գցե՛ք հիմնական ընտրական քվեատուփի մեջ, երկրորդ օրինակը՝ շրջիկ (տեղափոխվող) քվեատուփի մեջ (այսպիսինի գոյության դեպքում), իսկ երրորդ օրինակը պահե՛ք (*Ընտրական օրենսգիրք՝ հոդված 61.10*):
- ☐ Առաջին ընտրողի կողմից գրանցումն անցնելուց հետո, հեռախոսով տեղեկացրե՛ք ընտրատարածքային ընտրական հանձնաժողովին՝ քվեատուփը/քվեատուփերը զմտակնաբերելու, ստուգողական թերթը/ թերթերը քվեատուփի/քվեատուփերի մեջ գցելու և քվեարկությունը սկսելու մասին:

Ժամը 09:00-ից

- ☐ Շրջիկ (տեղափոխվող) քվեատուփի միջոցով քվեարկության անցկացումը հանձնարարե՛ք վիճակահանությամբ որոշված հանձնաժողովի 2 անդամներին և նրանց փոխանցե՛ք (*Ընտրական օրենսգիրք՝ հոդված 66.3*).
- ☐ շրջիկ (տեղափոխվող) քվեատուփի ցուցակը,
- ☐ ընտրողների գրանցումն իրականացնողի ստորագրությամբ և ընտրողների գրանցումն իրականացնողի կնիքով վավերացված անհրաժեշտ քանակի ընտրական քվեաթերթիկներ,
- ☐ հատուկ ծրարներ,
- ☐ զմտակնաբերված շրջիկ (տեղափոխվող) ընտրական քվեատուփը, որում պետք է գետեղված լինի ստուգողական թերթը:

•Ժամը 12:00

•Ժամը 12:00

Խնդրեք ընտրողների գրանցումն իրականացնողներին, առանց քվեարկության ընթացակարգին խանգարելու, հաշվել ընտրողների ցուցակներում ընտրողների ստորագրությունների և իրենց կողմից տրամադրված ընտրական քվեաթերթիկների քանակությունները (ներառյալ հանձնաժողովի նախագահին փոխանցված զատկած ընտրական քվեաթերթիկների քանակը): Եթե տվյալների միջև տարբերություն հայտնաբերվի, ընտրողների գրանցումն իրականացնողն անհապաղորեն պետք է բացատրագիր գրի, որը պետք է կցե՛ք քվեարկության արդյունքների ամփոփիչ արձանագրությանը/արձանագրություններին:

Ժամը 15:00

Ժամը 17:00

Ժամը 12:00-ին և ժամը 17:00-ին ընտրողների գրանցումն իրականացնողների հետ հաշված, ընտրողների ցուցակներում քվեարկության մասնակից ընտրողների ստորագրությունների թիվը հանձնաժողովի քարտուղարին նշել տվեք քվեարկության օրվա գործավարության մատյանում և քվեարկության արդյունքների ցուցադրական արձանագրություններում և տեղեկացրե՛ք ընտրատարածքային ընտրական հանձնաժողովին (*Ընտրական օրենսգիրք՝ հոդված 65.6*):


Մինչև ժամը 20:00

- ☐ Շրջիկ (տեղափոխվող) ընտրական քվեատուփը ընտրական տեղամաս պետք է վերադարձվի ժամը 20-ից ոչ ուշ (*Ընտրական օրենսգիրք՝ հոդված 66.1*):

Ժամը 20:00-ից մինչև քվեատուփը բացելը

- ☐ Ժամը 20:00-ին քվեարկությունն ավարտված հայտարարե՛ք: Հանձնարարե՛ք հանձնաժողովի անդամներից մեկին հաշվել հերթում կանգնած ընտրողների թիվը: Քվեարկությունն ավարտվելուց հետո փակե՛ք ընտրատեղամասի դուռը և զմռսակնե՛ք ընտրական քվեատուփի ճեղքը (*Ընտրական օրենսգիրք՝ հոդված 65.8*):

- ☐ Քվեարկությունն ավարտվելուց հետո, գնացե՛ք ընտրողների գրանցումն իրականացնողներից յուրաքանչյուրի մոտ և հանձնարարե՛ք մինչև քվեարկության ավարտը իրենց կողմից գրված բացատրագրերում (այսպիսինի գոյության դեպքում) նշված տվյալների նախատեսմամբ հաշվել:



Եթե անհամապատասխանություն է հայտնաբերվում, ընտրողների գրանցում իրականացնողին հանձնարարեք կրկին հաշվել և ճշգրտել քանակությունները: Եթե հավասարությունը կրկին չի ստացվում, խնդրե՛ք գրանցում իրականացնողին բացատրագիր գրել (պատճառի մատնանշմամբ), որը պետք է կցեք քվեարկության արդյունքների ամփոփիչ արձանագրությանը/արձանագրություններին:

- ☐ Վերոնշյալ տվյալները որոշելուց հետո, գրանցում իրականացնողներին հանձնարարե՛ք բոլոր տեսակի ցուցակներում հաշվել նաև քվեարկության մասնակից ընտրողների գենդերային տվյալները (կանանց թիվը) բոլոր տեսակի ցուցակներում: Տվյալները փոխանցե՛ք ընտրատարածքային ընտրական հանձնաժողովին:

- ☐ Անցկացրե՛ք վիճակահանություն առնվազն 3 հաշվողների որոշման համար (*Ընտրական օրենսգիրք՝ հոդված 67.1*):


- ☐ Դիտորդների միջև վիճակահանություն անցկացրե՛ք՝ 2 վերահսկողի որոշման համար, եթե դիտորդներն իրենց կազմից փոխհամաձայնությամբ չեն կարողանա ընտրել ընտրական քվեաթերթիկները հաշվելու ընթացակարգը վերահսկող անձանց (*Ընտրական օրենսգիրք՝ հոդված 67.1*):

- ☐ Վիճակահանություն անցկացրե՛ք ընտրական տեղամասում գտնվող ընտրական սուբյեկտների ներկայացուցիչներից ոչ ավելի, քան 2 ներկայացուցչի որոշման համար, որոնք հանձնաժողովի անդամներից վիճակահանությամբ որոշված հաշվողների հետ մասնակցում են իսկական (վավեր) կամ/և անվավեր ընտրական քվեաթերթիկների հաշվելու գործընթացին *(Ընտրական օրենսգիրք՝ հոդված 67.2):*
-
- ☐ Հաշվողներին ցուցում տվեք հաշվել ընտրողների ստորագրությունների քանակն ընտրողների ընդհանուր ցուցակում, ընտրողների հատուկ ցուցակում, ինչպես նաև շրջիկ (տեղափոխվող) քվեատուփի ցուցակում (այսպիսինի գոյության դեպքում) *(Ընտրական օրենսգիրք՝ հոդված 67.3):*
-
- ☐ Հանձնաժողովի քարտուղարին ցուցում տվեք առանձին-առանձին զմուսակնքել ընտրողների միասնական ցուցակի, ընտրողների հատուկ ցուցակի, ինչպես նաև շրջիկ (տեղափոխվող) քվեատուփի ցուցակի (այսպիսինի գոյության դեպքում) սեղանի տարբերակները *(Ընտրական օրենսգիրք՝ հոդված 67.3):*
-
- ☐ Հաշվողներին ցուցում տվեք առանձին-առանձին զմուսակնքել չօգտագործված և վնասված ընտրական քվեաթերթիկները *(Ընտրական օրենսգիրք՝ հոդված 67.4):*
-
- ☐ Զմուսակնքված փաթեթի վրա նշե՛ք ընտրական տեղամասի անվանումը, համարը, ընտրական փաստաթղթերի տեսակը և հաշվողների հետ ստորագրե՛ք *(Ընտրական օրենսգիրք՝ հոդված 67.5):*

Քվեատուփի բացելը, քվեարկության արդյունքների ամփոփիչ արձանագրությունների լրացումը

- ☐ Ստուգե՛ք քվեատուփի, նաև շրջիկ (տեղափոխվող) քվեատուփի (այսպիսինի գոյության դեպքում), զմուսակնքների ամբողջականությունը *(Ընտրական օրենսգիրք՝ հոդված 68.1):*
-
- ☐ Նախ՝ բացե՛ք շրջիկ (տեղափոխվող) ընտրական քվեատուփը (այսպիսինի գոյության դեպքում): Հաշվողները ստուգում են ընտրական քվեատուփում ստուգողական թերթի առկայությունը և որոշում են դրա և հանձնաժողովում համեմատության նպատակով պահված ստուգողական թերթի նույնականությունը *(Ընտրական օրենսգիրք՝ հոդված 68.4):*
-
- ☐ Բացե՛ք հիմնական ընտրական քվեատուփը: Հաշվողները ստուգում են ընտրական քվեատուփում ստուգողական թերթի առկայությունը և, դրա իսկականը լինելը հավաստելու նպատակով, համեմատում են հանձնաժողովում համեմատության նպատակով պահված ստուգողական թերթի հետ *(Ընտրական օրենսգիրք՝ հոդված 68.5):*
-
- ☐ Բացե՛ք բացառության դեպքում ստեղծված ընտրական տեղամասի ընտրական քվեատուփը (այսպիսինի գոյության դեպքում): Հաշվողները ստուգում են ընտրական քվեատուփում ստուգողական թերթի առկայությունը և, դրա իսկականը լինելը հավաստելու նպատակով, համեմատում են հանձնաժողովում համեմատության նպատակով պահված ստուգողական թերթի հետ:
-
- ☐ Եթե ամեն ինչ կարգին լինի, հաշվողները իրար պետք է խառնեն ընտրական տեղամասի շրջիկ (տեղափոխվող), հիմնական և բացառության դեպքում ստեղծված ընտրական քվեատուփերից դատարկած հատուկ ծրարները: *(Ընտրական օրենսգիրք՝ հոդված 68.5):*

- ☐ Հաշվողներին ցուցնում տվեք տեսակավորել ընտրական քվեաթերթիկները: Հանձնաժողովի հետ մեկտեղ մեկ առ մեկ քվեարկե՛ք կասկածելի համարված ընտրական քվեաթերթիկները *(Հնտրական օրենսգիրք՝ հոդված 69.5):*
- ☐ Հաշվողներին ցուցնում տվեք հաշվել անվավեր ընտրական քվեաթերթիկները և յուրաքանչյուր ընտրական սուբյեկտի ստացած ձայները/ընտրական քվեաթերթիկները *(Հնտրական օրենսգիրք՝ հոդված 69.6–9):*
- ☐ Հանձնաժողովի քարտուղարի հետ ստուգե՛ք քվեարկության արդյունքների ամփոփիչ արձանագրությունների տվյալների ճշտությունը.



- ☐ Հաշվողներին ցուցնում տվեք կապել և զմուսակնքել. անվավեր ընտրական քվեաթերթիկները (առանձին են զմուսակնքվում այլ ընտրական տեղամասի համար հատկացված անվավեր ընտրական քվեաթերթիկները), յուրաքանչյուր ընտրական սուբյեկտի ընտրական քվեաթերթիկները (փաթեթների վրա ստորագրում են հաշվողները և հանձնաժողովի նախագահը) *(Հնտրական օրենսգիրք՝ հոդված 69.6–9):*
- ☐ Հանձնաժողովի քարտուղարը, Ձեզ հետ համաձայնեցնելով, լրացնում է քվեարկության արդյունքների ամփոփիչ արձանագրությունները: Քվեարկության արդյունքների ամփոփիչ արձանագրությունները կազմելիս՝ պետք է նկատի առնվեն ընտրողների գրանցումն իրականացնողների բացատրագրերում (այսպիսինի գոյության դեպքում) նշված տվյալները: Հանձնաժողովի քարտուղարը քվեարկության արդյունքների ամփոփիչ արձանագրությունները գրանցում է գրանցամատյանում: Հանձնաժողովի բոլոր անդամները պարտավոր են ստորագրել քվեարկության արդյունքների ամփոփիչ արձանագրությունները, ինչով հավաստվում է նրանց ներկա գտնվելը ընտրատեղամասում: Լրացված քվեարկության արդյունքների ամփոփիչ արձանագրությունները վավերացրե՛ք հանձնաժողովի հատուկ կնիքով: Քվեարկության արդյունքների ամփոփիչ արձանագրությունների ֆոտոպատճենները, ուղղման արձանագրության/արձանագրությունների և ընտրողների գրանցում իրականացնողների գրավոր բացատրագրերի հետ (այսպիսինի գոյության դեպքում) անհապաղորեն ուղարկե՛ք ԿԸՀ-ին *(Հնտրական օրենսգիրք՝ հոդված 71.14):*
- ☐ Քվեարկության արդյունքների ամփոփիչ արձանագրություններ տրամադրելիս (պահանջելու դեպքում)՝ հանձնաժողովի քարտուղարի հետ ստորագրե՛ք և վավերացրե՛ք դրանք հանձնաժողովի հատուկ կնիքով *(Հնտրական օրենսգիրք՝ հոդված 71.8):*

- ☐ Առանձին-առանձին փաթեթներով զմուսակնքե՛ք հանձնաժողովի հատուկ կնիքը (հանձնաժողովի հատուկ կնիքի զմուսակնքված փաթեթի վրա ստորագրում են հանձնաժողովի բոլոր անդամները) *(Հնտրական օրենսգիրք՝ հոդված 71.13),* ընտրողների գրանցումն իրականացնողների կնիքները, քվեարկության օրվա գործավարության մատյանը, դիմում-բողոքներների հետ: Գրանցամատյանը և քվեարկության արդյունքների ամփոփիչ արձանագրությունները չեն զմուսակնքվում:

- Զմուսակնքված ընտրական փաստաթղթերը գետեղե՛ք մեծ արկղի կամ տոպրակի մեջ և տարե՛ք ընտրատարածքային ընտրական հանձնաժողով: Քվեատուփից/տոպրակից առանձին՝ տարե՛ք քվեարկության արդյունքների ամփոփիչ արձանագրությունները, գրանցամատյանի, քվեարկության օրվա գործավարության մատյանի և դիմում-բողոքների զմուսակնքված տոպրակները:

ՀԱՎԵԼՎԱԾ №5

**Տեղամասային ընտրական հանձնաժողովի քարտուղարի լիազորությունները քվեարկության օրը
(8 հոկտեմբերի)**

Ժամը 07:00-08:00

- ☐ Ընտրական տեղամասը բացելիս՝ հանձնաժողովի նախագահից ստացել քվեարկության օրվա գործավարության մատյանը, գրանցամատյանը, քվեարկության արդյունքների ամփոփիչ արձանագրությունները և ցուցադրական արձանագրությունները:

- ☐ Քվեարկության արդյունքների ցուցադրական արձանագրությունները փակցրել քվեարկության տեղամասում բոլորի համար տեսանելի տեղում:

- ☐ Քվեարկության օրվա գործավարության մատյանի առաջին և երկրորդ էջերում, իսկ անհրաժեշտության դեպքում՝ 10-րդ և հաջորդ էջերում ևս գրել քվեարկության տեղամասը բացելիս քվեարկության շենքում գտնվող իրավագոր անձանց (հանձնաժողովի անդամների, դիտորդների, ներկայացուցիչների) անունները և ազգանունները և խնդրել նրանց շենքում գտնվելը ստորագրությամբ վավերացնել քվեարկության օրվա գործավարության մատյանում *(Ընտրական օրենսգիրք՝ հոդված 61.2.ա):*

- ☐ Հանձնաժողովի նախագահի կողմից հանձնաժողովի հատուկ կնիքի գմռակնաձևով փաթեթը բացելուց հետո, տվյալ կնիքի համարը նշել քվեարկության օրվա գործավարության մատյանի 9-րդ էջում:

- ☐ Հանձնաժողովի անդամների միջև գործառնությունների բաշխման նպատակով անցկացված վիճակահանության արդյունքները գրանցել քվեարկության օրվա գործավարության մատյանի 3-րդ էջում *(Ընտրական օրենսգիրք՝ հոդված 61.2.գ):*

- ☐ Բողոքների գրանցման գործընթացի դիտարկման նպատակով անցկացված վիճակահանությամբ որոշված ընտրական սուբյեկտների ներկայացուցիչների տվյալները գրանցել քվեարկության օրվա գործավարության մատյանի 3-րդ էջում:

- ☐ Հայտարարել քվեարկության ընդհանուր ցուցակի, ընտրողների հատուկ ցուցակի և շրջիկ (տեղափոխվող) քվեատուփի ցուցակի մեջ առկա ընտրողների քանակը նշել քվեարկության օրվա գործավարության մատյանի 6-րդ, 7-րդ էջերում և քվեարկության արդյունքների ցուցադրական արձանագրություններում *(Ընտրական օրենսգիրք՝ հոդված 61.9):*

- ☐ Հայտարարել ստացած ընտրական քվեաթերթիկների քանակը և տվյալները նշել քվեարկության օրվա գործավարության մատյանի 6-րդ, 7-րդ էջերում և քվեարկության արդյունքների ցուցադրական արձանագրություններում *(Ընտրական օրենսգիրք՝ հոդված 61.9):*

- ☐ Քվեարկության օրվա գործավարության մատյանի 3-րդ և 9-րդ էջերում նշել ընտրողների գրացումն իրականացնողներից յուրաքանչյուրին փոխանցած կնիքի համարը:

- ☐ Ընտրական քվեատուփերի զմուսակնքման ժամանակը և ընտրական քվեատուփերի զմուսակնքների անհատական համարները նշե՛ք քվեարկության օրվա գործավարության մատյանի 4-րդ էջում:

- ☐ Մինչև քվեարկությունը սկսվելը, հանձնաժողովի նախագահի հետ մեկտեղ լրացրե՛ք ստուգողական թերթի ինքնապատճենվող ձևաթուղթը (բացառությամբ առաջին ընտրողի մասին տվյալների): Ուշադրություն՝ ևս դարձրեք, որ ստուգողական թերթը ստորագրեն հանձնաժողովի բոլոր ներկա գտնվող անդամները *(Ընտրական օրենսգիրք՝ հոդված 61.10):*

Ժամը 08:00-ից

- ☐ Ընտրական տեղամաս գալով՝ առաջին ընտրողն անցնում է գրանցումը և ստանում ընտրական քվեաթերթիկը/քվեաթերթիկները: Դրանից հետո առաջին ընտրողի մասին տվյալները գրանցե՛ք ստուգողական թերթի վրա, ստորագրել տվե՛ք նրան և նշե՛ք ընտրական քվեատուփերի մեջ ստուգողական թերթերը գցելու ճշգրիտ ժամանակը (ստուգողական թերթի տվյալները գրանցե՛ք գործավարության մատյանի 4-րդ էջում):

Ժամը 09:00-ից

- ☐ Քվեարկության օրվա գործավարության մատյանի 4-րդ էջում նշե՛ք, թե որքան ընտրական քվեաթերթիկ է փոխանցվել շրջիկ (տեղափոխվող) քվեատուփը տանող հանձնաժողովի անդամներին և նշեք շրջիկ (տեղափոխվող) քվեատուփը ընտրական տեղամասից տանելու ժամանակը *(Ընտրական օրենսգիրք՝ հոդված 62.6):*

Ժամը 12:00

- ☐ Ընտրողների գրանցում իրականացնողներից յուրաքանչյուրի հետ հաշվե՛ք ընտրողների ցուցակներում քվեարկությանը մասնակցած ընտրողների ստորագրությունների քանակը և դրանց գումարը նշե՛ք գործավարության մատյանի 6-րդ, 7-րդ էջերում և քվեարկության արդյունքների ցուցադրական արձանագրություններում:

Ժամը 17:00

- ☐ Ընտրողների գրանցում իրականացնողներից յուրաքանչյուրի հետ հաշվե՛ք ընտրողների ցուցակներում քվեարկությանը մասնակցած ընտրողների ստորագրությունների քանակը և դրանց գումարը նշեք գործավարության մատյանի 6-րդ, 7-րդ էջերում և քվեարկության արդյունքների ցուցադրական արձանագրություններում:

Մինչև ժամը 20:00

- ☐ Շրջիկ (տեղափոխվող) քվեատուփը (այսպիսինի գոյության դեպքում) ընտրատեղամաս վերադարձնելուց հետո, մնացած չօգտագործված ընտրական քվեաթերթիկների և հատուկ ծրարների անկյունը կտրեք, վրան գրե՛ք «վնասված է» և, հանձնաժողովի նախագահի ստորագրելուց հետո, պահեք առանձին, չօգտագործված ընտրական քվեաթերթիկների քանակը և շրջիկ (տեղափոխվող) քվեատուփը ընտրական տեղամաս վերադարձնելու ժամանակը գրանցե՛ք գործավարության մատյանի 4-րդ էջում *(Ընտրական օրենսգիրք՝ հոդված 62.6):*

Ժամը 20:00-ից մինչև քվեատուփի բացելը

Քվեարկության օրվա գործավարության մատյանի 4-րդ էջում նշե՛ք ժամը 20:00-ի դրությամբ հերթում կանգնած ընտրողների քանակը:

- ☐ Քվեարկության օրվա գործավարության մատյանի 3-րդ էջում նշե՛ք հանձնաժողովի անդամների միջև հաշվողների գործառույթները վիճակահանությամբ բաշխելու արդյունքները:

☐ Քվեարկության օրվա գործավարության մատյանի 3-րդ էջում գրանցեք ընտրական քվեաթերթիկները հաշվելու գործընթացի հսկման համար որոշված վերահսկիչների տվյալները:

☐ Քվեարկության օրվա գործավարության մատյանի 3-րդ էջում գրե՛ք վիճակահանությամբ որոշված ընտրական սուբյեկտների ներկայացուցիչների տվյալները, որոնք հաշվողների հետ մասնակցում են վավեր կամ/և անվավեր ընտրական քվեաթերթիկների հաշվման գործընթացին:

☐ Քվեարկության օրվա գործավարության մատյանում նշե՛ք ձայները հաշվելու ժամանակ քվեարկության շենքում գտնվող անձանց ով լինելը:

☐ Ըստ ընտրողների միասնական ցուցակի, ընտրողների հատուկ ցուցակի (այսպիսինի գոյության դեպքում) և շրջիկ (տեղափոխվող) քվեատուփի ցուցակի (այսպիսինի գոյության դեպքում) հաշվողների կողմից որոշված քվեարկության մասնակից ընտրողների ընդհանուր քանակը նշե՛ք քվեարկության օրվա գործավարության մատյանում և քվեարկության արդյունքների ցուցադրական արձանագրություններում (*Ընտրական օրենսգիրք՝ հոդված 67.3*):

☐ Առանձին-առանձին փաթեթավորե՛ք և զմուսակնե՛ք ընտրողների միասնական ցուցակի, ընտրողների հատուկ ցուցակի, ինչպես նաև շրջիկ (տեղափոխվող) քվեատուփի (այսպիսինի գոյության դեպքում) ցուցակի սեղանի տարբերակները: Զմուսակնքած փաթեթների վրա ստորագրում են հանձնաժողովի նախագահը և հաշվողները (*Ընտրական օրենսգիրք՝ հոդված 67.3*):

☐ **Գոյություն ունենալու դեպքում՝** հաշվառե՛ք այն դեպքերի թիվը, որոնք վերաբերում են ընտրողի դեմքի և ներկայացված փաստաթղթերում/փաստաթղթերում /ընտրողների ցուցակում առկա լուսանկարների միմյանց հետ անհամապատասխանությանը, և քվեարկության օրվա գործավարության մատյանին կցված փաստաթղթերի քանակը: Տվյալները գրանցե՛ք քվեարկության օրվա գործավարության մատյանի 29-րդ և հաջորդ էջերում, ինչից հետո

զմուսակնե՛ք տվյալ փաստաթղթերը: Զմուսակնքված փաթեթի վրա նշե՛ք ընտրական տեղամասի անվանումը և համարը, փաստաթղթերի տեսակը և ստորագրե՛ք (*Ընտրական օրենսգիրք՝ հոդված 67.5*)

☐ Կտրե՛ք չօգտագործված ընտրական քվեաթերթիկների անկյունը: Չօգտագործված և վնասված ընտրական քվեաթերթիկները կապե՛ք առանձին-առանձին փաթեթներով: Զմուսակնքված փաթեթների վրա ստորագրում են հանձնաժողովի նախագահը և հաշվողները (*Ընտրական օրենսգիրք՝ հոդված 67.4*):

Քվեատուփի բացելը, քվեարկության արդյունքների ամփոփիչ արձանագրությունների կազմումը

☐ Քվեատուփը բացելուց հետո, հաշվողների կողմից հաշվված անվավեր ընտրական քվեաթերթիկների և ընտրական սուբյեկտների կողմից ստացած ձայների քանակությունները նշե՛ք քվեարկության օրվա գործավարության մատյանում և քվեարկության արդյունքների ցուցադրական արձանագրություններում (այլ ընտրական տեղամասի համար հատկացված անվավեր ընտրական քվեաթերթիկների քանակը նշվում է միայն քվեարկության օրվա գործավարության մատյանում) (*Ընտրական օրենսգիրք՝ հոդված 69.6,8*):

- ☐ Հանձնաժողովի նախագահի հետ ստուգելով քվեարկության արդյունքների ամփոփիչ արձանագրությունների տվյալների ճշգրտությունը, ընտրական սուբյեկտների ստացած ձայների քանակին + անվավեր ընտրական քվեաթերթիկների քանակը = կամ < ընտրողների ստորագրությունների քանակ:
- ☐ Հաշվողների կողմից ձայները հաշվելու ընթացակարգն ավարտելուց հետո, հանձնաժողովի նախագահի հետ համաձայնեցմամբ, լրացրելով քվեարկության արդյունքների ամփոփիչ արձանագրությունները (*Ընտրական օրենսգիրք՝ հոդված 71.1*): Քվեարկության արդյունքների ամփոփիչ արձանագրությունները կազմելիս՝ պետք է նկատի առնված լինեն ընտրողների գրանցումն իրականացնողների բացատրագրերում (այսպիսինի գոյության դեպքում) նշված տվյալները: **Հիշե՛ք՝ արգելվում է քվեարկության արդյունքների ամփոփիչ արձանագրության մեջ տեղ գտած տվյալներն ուղղել** (*Ընտրական օրենսգիրք՝ հոդված 70.3*):
- ☐ Ստորագրելով քվեարկության արդյունքների ամփոփիչ արձանագրությունները և հետևելով, որ այն ստորագրեն հանձնաժողովի բոլոր անդամները: Քվեարկության արդյունքների ամփոփիչ արձանագրությունները վավերացրելով հանձնաժողովի հատուկ կնիքով և գրանցելով գրանցամատյանի էլից փաստաթղթերի մասում (*Ընտրական օրենսգիրք՝ հոդված 71.4*):
- ☐ Քվեարկության արդյունքներն ամփոփելուց հետո, փակելով քվեարկության օրվա գործավարության մատյանը և գրանցամատյանը, համապատասխան «Մատյանը փակված է» գրառումով, հաստատելով Ձեր և հանձնաժողովի նախագահի ստորագրություններով, ինչից հետո դրանք վավերացրելով հանձնաժողովի հատուկ կնիքով (*Տեղամասային ընտրական հանձնաժողովի կանոնակարգ՝ հոդված 11.15, Ընտրական օրենսգիրք՝ հոդված 62.11, 71.12*):

Ի նկատի ունեցեք.

- ▶ Հանձնաժողովի անդամների վիճակահանությամբ սահմանված գործառնություններն այլ անդամների ժամանակավոր փոխանցման դեպքում, տեղեկությունը գրառելով քվեարկության օրվա գործավարության մատյանի 5-րդ էջում (*Ընտրական օրենսգիրք՝ հոդված 61.2.է*):
- ▶ Եթե նշմարումը ստուգելիս պարզվի, որ ընտրողն արդեն ունի նշմարում, նրա ինքնությունը նշելով քվեարկության օրվա գործավարության մատյանի 4-րդ էջում:
- ▶ Գրանցամատյանում և քվեարկության օրվա գործավարության մատյանի 10-րդ և հաջորդ էջերում գրանցելով բոլոր մտից դիմումները/բողոքները (*Ընտրական օրենսգիրք՝ հոդված 62.9*):
- ▶ Քվեարկության արդյունքների ամփոփիչ արձանագրության ֆոտոպատճեն տրամադրելիս՝ ֆոտոպատճենը վավերացրելով հանձնաժողովի հատուկ կնիքով և հանձնաժողովի նախագահի հետ այն ստորագրելով (*Ընտրական օրենսգիրք՝ հոդված 71.8*):
- ▶ Քվեարկության արդյունքների ամփոփիչ արձանագրություններ ստանալով՝ ստացող անձինք ստորագրությամբ պետք է հավաստեն քվեարկության օրվա գործավարության մատյանում:

ՀԱՎԵԼՎԱԾ №6

Հանձնաժողովի՝ ընտրողների հոսքը կարգավորող անդամի գործառույթները (Ընտրական օրենսգիրք՝ հոդված 64, 65)

- ▶ Կարգավորել՝ ընտրական տեղամաս մտած ընտրողների հոսքը:
- ▶ Ընտրողին խնդրել՝ ներկայացնել Վրաստանի քաղաքացու ինքնությունը հավաստող վկայականը կամ Վրաստանի քաղաքացու անձնագիրը:
- ▶ Ուլտրամանուշակագույն լապտերով ստուգել՝, թե չունի արդյոք ընտրողը նշմարում, և, երբ կհամոզվեք, որ ընտրողը չունի նշմարում, նրան տվե՛ք քվեարկությանը մասնակցելու իրավունք:
- ▶ Հետևե՛ք՝ քանի ընտրող է կանգնած ընտրողի համար հատկացված գրանցման սեղանի մոտ: Եթե գրանցման սեղանի մոտ երկուսից ավելի ընտրող կա կանգնած, ժամանակավորապես դանդաղեցրե՛ք քվեարկության շենք հերթական ընտրողի մուտքը:
- ▶ Ընտրողին ուղղորդե՛ք դեպի այն գրանցման սեղանը, որին պատկանում է ընտրողների ցուցակում ընդգրկված՝ նրա ազգանվան առաջին տառը:

ՈՒՇԱՂՈՒԹՅՈՒՆ

- ▶ Եթե ընտրողը չունի Վրաստանի քաղաքացու ինքնությունը հավաստող վկայական կամ Վրաստանի քաղաքացու անձնագիր, բացատրե՛ք, որ նա չի կարող մասնակցել քվեարկությանը, և խնդրե՛ք լքել ընտրական տեղամասը:
- ▶ Եթե ուլտրամանուշակագույն լապտերով նշմարումը ստուգելիս պարզվի, որ ընտրողն արդեն ունի նշմարում, նրան արգելվում է մասնակցել քվեարկությանը: Ընտրողի ով լինելը տեղեկացրե՛ք հանձնաժողովի նախագահին: Ընտրողին խնդրե՛ք լքել ընտրական տեղամասը:
- ▶ Այն ընտրողը, որը «ֆիզիկական վիճակի», մասնավորապես, վերին վերջավորություններ չունենալու պատճառով չի կարողանում ինքնուրույն իրականացնել քվեարկության ընթացակարգերը, չի անցնում նշմարման ստուգման և նշմարման ընթացակարգերը:

**Հանձնաժողովի՝ ընտրողների գրացումն իրականացնող անդամի գործառույթները
(Ընտրական օրենսգիրք՝ հոդված 65)**

- ▶ Ընտրողին խնդրեք ներկայացնել.
- ✓ Վրաստանի քաղաքացու ինքնությունը հավաստող վկայականը կամ Վրաստանի քաղաքացու անձնագիրը,
- ✓ հարկադրաբար վերաբնակեցված անձի՝ տարհանվածի, դեպքում՝ տարհանվածի վկայականը՝ Վրաստանի քաղաքացու ինքնությունը հավաստող վկայականի կամ Վրաստանի քաղաքացու անձնագրի հետ:
 - ▶ Ստուգե՛ք, թե ընդգրկված է արդյոք ընտրողը ընտրողների միասնական կամ հատուկ ցուցակի մեջ, և համեմատե՛ք ընտրողի անձնական համարը ընտրողների ցուցակում առկա համարի հետ:
 - ▶ Ստուգե՛ք ներկայացված փաստաթղթում/փաստաթղթերում առկա ընտրողի հաշվառման տվյալների և ընտրողների ցուցակում ընդգրկված տվյալների համապատասխանությունը:
 - ▶ Ստուգե՛ք ներկայացված փաստաթղթում/փաստաթղթերում և ընտրողների ցուցակում առկա լուսանկարների և ընտրողի դեմքի իրար հետ համապատասխանությունը:
 - ▶ Եթե ընտրողն ընդգրկված է ընտրողների ցուցակի մեջ, ընտրողին արե՛ք նշմարում:
 - ▶ Վավերացրե՛ք ընտրական քվեաթերթիկը/քվեաթերթիկները (դարձերեսին, դրա համար հատկացված տեղում) գրանցումն իրականացնողի կնիքով:
 - ▶ Ստորագրե՛ք ընտրական քվեաթերթիկի/քվեաթերթիկների ետին էջում:
 - ▶ Ընտրողների ցուցակում ստորագրությամբ հավաստե՛ք ընտրական քվեաթերթիկի/քվեաթերթիկների հատկացումը:
- ▶ Խնդրե՛ք ընտրողին, ընտրողների ցուցակում իր ազգանվան երկայնքով ստորագրությամբ հավաստել ընտրական քվեաթերթիկը/քվեաթերթիկները ստանալը:
- ▶ Ընտրողին փոխանցե՛ք Ձեր կողմից ստորագրված և գրանցումն իրականացնողի կնիքով վավերացված ընտրական քվեաթերթիկը/քվեաթերթիկները:
- ▶ Ուղղորդե՛ք ընտրողին դեպի քվեախցիկ:

ՈՒՇԱԴՐՈՒԹՅՈՒՆ

- ▶ Եթե ընտրողը չներկայացնի Վրաստանի քաղաքացու ինքնությունը հավաստող վկայական, Վրաստանի քաղաքացու անձնագիր, հարկադրաբար վերաբնակեցված անձի՝ տարհանվածի, վկայական՝ Վրաստանի քաղաքացու ինքնությունը հավաստող վկայականի կամ Վրաստանի քաղաքացու անձնագրի հետ, նրան չպետք է փոխանցեք ընտրական քվեաթերթիկ/քվեաթերթիկներ:
- ▶ Եթե ընտրողը հրաժարվում է նշմարումից, նա իրավունք չունի մասնակցելու քվեարկությանը, և նրան չպետք է փոխանցեք ընտրական քվեաթերթիկ/քվեաթերթիկներ:
- ▶ Այն ընտրողը, որը ֆիզիկական վիճակի, մասնավորապես, վերին վերջավորություններ չունենալու պատճառով չի կարողանում ինքնուրույն իրականացնել քվեարկության ընթացակարգերը, չի անցնում նշմարման ընթացակարգը: Ընտրողին ընտրական քվեաթերթիկ/քվեաթերթիկներ փոխանցելիս՝ ընտրողների միասնական ցուցակի «Ընտրողի ստորագրություն» սյունակում պետք է անեք «ֆիզիկական վիճակ» գրառումը և հաստատեք ստորագրությամբ:
- ▶ Եթե Դուք կամ ընտրողը վնասեք ընտրական քվեաթերթիկը/քվեաթերթիկները, այդ մասին անհապաղ տեղեկացրեք հանձնաժողովի նախագահին և ընտրողին փոխանցե՛ք նոր (Ձեր կողմից ստորագրված և գրանցումն իրականացնողի կնիքով վավերացված) ընտրական քվեաթերթիկ/քվեաթերթիկներ:

Ի նկատի ունեցեք.

- ✓ Երաշխավորվում է, որ ընտրողների գրանցում իրականացնողը ժամը 10:00-ին, 12:00-ին, 15:00- ին և 17:00-ին, առանց քվեարկության գործընթացին խանգարելու, վերահաշվի ընտրողների ցուցակներում ընտրողների ստորագրությունների և իր կողմից տրված ընտրական քվեաթերթիկների քանակները (հանձնաժողովի նախագահին փոխանցված վնասված քվեաթերթիկների քանակը ներառյալ) և տվյալները տեղեկացնի հանձնաժողովի նախագահին: Եթե տվյալների միջև տարբերություն հայտնաբերվի, ընտրողների գրանցում իրականացնողն անհապաղորեն պետք է բացատրագիր գրի, որը կկցվի քվեարկության արդյունքների ամփոփիչ արձանագրությանը/ արձանագրություններին:
- ✓ Ընտրողների գրանցում իրականացնողի գործառույթի փոխանցման դեպքում, գրանցողը պարտավոր է կրկին հաշվել ընտրողների ցուցակներում ընտրողների ստորագրությունների և իր կողմից հատկացված ընտրական քվեաթերթիկների քանակությունները (ներառյալ հանձնաժողովի նախագահին փոխանցված վնասված ընտրական քվեաթերթիկների քանակը) և արդյունքների մասին տեղեկացնել հանձնաժողովի նախագահին: Տվյալների միջև տարբերության հայտնաբերման դեպքում ընտրողների գրանցում իրականացնողը անհապաղորեն պետք է բացատրագիր գրի, որը կկցվի քվեարկության արդյունքների ամփոփիչ արձանագրությանը/արձանագրություններին:

**Հանձնաժողովի՝ շրջիկ (տեղափոխվող) քվեատուփը տանող անդամի գործառնությունները
(Ընտրական օրենսգիրք՝ հոդված 66)**

ՈՒՇԱՂԴՈՒԹՅՈՒՆ

Շրջիկ (տեղափոխվող) քվեատուփի միջոցով քվեարկության ընթացակարգը սկսվում է քվեարկության օրվա ժամը 9-ից և ավարտվում է ժամը 19-ին:

- ▶ Քվեարկության օրվա ժամը 9-ից հանձնաժողովի նախագահը պետք է Ձեզ փոխանցի.
- ✓ շրջիկ (տեղափոխվող) քվեատուփը ցուցակը,
- ✓ ընտրողների գրանցումն իրականացնողի ստորագրությամբ և գրանցումն իրականացնողի կնիքով վավերացված անհրաժեշտ քանակությամբ ընտրական քվեաթերթիկներ,
- ✓ հատուկ ծրարներ,
- ✓ զմուսակնքված շրջիկ (տեղափոխվող) քվեատուփը, որում զետեղված է ստուգողական թերթը:

- ▶ Ընտրողին մոտենալիս խնդրե՛ք նրան ներկայացնել.
- ✓ Վրաստանի քաղաքացու ինքնությունը հավաստող վկայականը կամ Վրաստանի քաղաքացու անձնագիրը,
- ✓ հարկադրաբար վերաբնակեցված անձի՝ տարհանվածի, դեպքում՝ տարհանվածի վկայականը, Վրաստանի քաղաքացու ինքնությունը հավաստող վկայականի կամ Վրաստանի քաղաքացու անձնագրի հետ:
- ✓ Համեմատե՛ք ընտրողի անձնական համարը շրջիկ (տեղափոխվող) քվեատուփի ցուցակում ընդգրկված անձնական համարի հետ:
 - ▶ Շրջիկ (տեղափոխվող) քվեատուփի ցուցակում ստորագրությամբ վավերացրե՛ք ընտրական քվեաթերթիկ/քվեաթերթիկներ տրամադրելը:
 - ▶ Խնդրե՛ք ընտրողին շրջիկ (տեղափոխվող) քվեատուփի ցուցակում իր ազգանվան երկայնքով ստորագրությամբ հավաստել ընտրական քվեաթերթիկը/քվեաթերթիկները ստանալը:
 - ▶ Ընտրողին փոխանցե՛ք, ընտրողների գրանցումն իրականացնողի ստորագրությամբ և գրանցումն իրականացնողի կնիքով վավերացված, ընտրական քվեաթերթիկը/քվեաթերթիկները:
 - ▶ Ընտրողի կողմից քվեաթերթիկը լրացնելուց հետո, նրան փոխանցե՛ք հատուկ ծրարը և ցուցո՛ւմ տվեք, որ նրա մեջ զետեղի ծաված ընտրական քվեաթերթիկը/քվեաթերթիկները:
 - ▶ Ընտրողին խնդրե՛ք ծրարը գցել շրջիկ (տեղափոխվող) ընտրական քվեատուփի մեջ:
 - ▶ Քվեարկության ավարտից հետո շրջիկ (տեղափոխվող) քվեատուփի ճեղքն այնպես զմուսակնքե՛ք, որ անհնար լինի, առանց զմուսակնիքը վնասելու, այն բացել:
 - ▶ Ոչ ուշ, քան քվեարկության օրվա ժամը 20-ը շրջիկ (տեղափոխվող) ընտրական քվեատուփը վերադարձրե՛ք ընտրական տեղամաս:
 - ▶ Քվեարկության շենք վերադառնալուց հետո, հանձնաժողովի քարտուղարին փոխանցե՛ք չօգտագործված ընտրական քվեաթերթիկները և հատուկ ծրարները: Սպասե՛ք հանձնաժողովի նախագահի հետագա ցուցումներին:

ՈՒՇԱԴՐՈՒԹՅՈՒՆ

- ▶ Եթե խախտվել է շրջիկ (տեղափոխվող) քվեատուփի զմռսակնիքի ամբողջականությունը, այդ մասին անհապաղ տեղեկացրե՛ք հանձնաժողովի նախագահին: Կազմե՛ք համապատասխան արձանագրություն (նշե՛ք պատճառը) և ստորագրե՛ք Ձեզ ուղեկցող անձանց հետ մեկտեղ: Սպասե՛ք հանձնաժողովի նախագահի հետագա ցուցումներին:
- ▶ Շրջիկ (տեղափոխվող) քվեատուփի միջոցով քվեարկությանը մասնակցող ընտրողների հանդեպ չի կիրառվում նշմարման ընթացակարգ:
- ▶ «Ֆիզիկական վիճակի» պատճառով ընտրողի կողմից շրջիկ (տեղափոխվող) քվեատուփի միջոցով քվեարկության դեպքում, շրջիկ (տեղափոխվող) քվեատուփի ցուցակի «Ընտրողի ստորագրություն» սյունակում արե՛ք՝ գրառում՝ «Ֆիզիկական վիճակ» և հավաստե՛ք ստորագրությամբ:
- ▶ «Ֆիզիկական վիճակ» ունեցող ընտրողի (նաև այն ընտրողի, որն ինքնուրույն չի կարող լրացնել ընտրական քվեաթերթիկը) փոխարեն, նրա ներկայությամբ, ընտրական քվեաթերթիկը լրացնում, հատուկ ծրարի մեջ է գետեղում և ծրարը շրջիկ (տեղափոխվող) քվեատուփի մեջ գցում նրա կողմից ընտրված անձը (բացառությամբ ընտրական հանձնաժողովի անդամի, թեկնածուի, ընտրական սուբյեկտի ներկայացուցչի, մամուլի և զանգվածային լրատվության այլ միջոցի ներկայացուցչի և դիտորդի):

**Հանձնաժողովի՝ քվեատուփը և հատուկ ծրարները հսկող անդամի գործառույթներ
(Ընտրական օրենսգիրք՝ հոդված 65)**

- ▶ Մշտապես պետք է գտնվեք ընտրական քվեատուփի մոտ:
- ▶ Պետք է վերահսկեք ընտրական քվեատուփը և հատուկ ծրարները:
- ▶ Պետք է փակ պահեք ընտրական քվեատուփի մեջ հատուկ ծրարը գցելու ճեղքը:
- ▶ Ընտրողին, քվեախցիկից դուրս գալուց հետո, պետք է ցուցում տաք, որ առանձին դրված սեղանից ինքնուրույն վերցնի մեկ հատուկ ծրար և նրա մեջ զետեղի ծալված ընտրական քվեաթերթիկը/քվեաթերթիկները:
- ▶ Նրանից հետո, երբ վստահ կլինեք, որ ընտրողի ձեռքին միայն մեկ հատուկ ծրար կա, պետք է բացեք քվեատուփի ճեղքը և ընտրողին ցուցում տաք, որ հատուկ ծրարը գցի ընտրական քվեատուփի մեջ:
- ▶ Խնդրե՛ք ընտրողին ազատել ընտրական տեղամասը:

ՈՒՇԱՐԴՈՒԹՅՈՒՆ

- ▶ Միայն ընտրողն ունի ընտրական քվեաթերթիկը/քվեաթերթիկները հատուկ ծրարի մեջ զետեղելու իրավունք: Բացառություն է «ֆիզիկական վիճակ» ունեցող ընտրողը, որի փոխարեն նրա ներկայությամբ ընտրական քվեաթերթիկը /քվեաթերթիկները հատուկ ծրարի մեջ է զետեղում և ծրարը ընտրական քվեատուփի մեջ գցում նրա կողմից ընտրված անձը, որն օգնում է նրան քվեախցիկում ընտրական քվեաթերթիկը/ քվեաթերթիկները լրացնել:
- ▶ Թույլ չի տրվում ընտրական քվեատուփին մեկից ավելի ընտրողի մոտենալը:
- ▶ Ընտրական հանձնաժողովի անդամն իրավունք չունի բացել լրացված ընտրական քվեաթերթիկը/քվեաթերթիկները:
- ▶ Մինչև ընտրողի կողմից քվեաթերթիկը/քվեաթերթիկները հատուկ ծրարի մեջ զետեղելը՝ իրավունք ունեք նրանից պահանջել՝ Ձեզ ցույց տալ, որ ձեռքում սահմանված քանակությամբ ընտրական քվեաթերթիկ և մեկ հատուկ ծրար կա: Ընտրողը պարտավոր է կատարել այդ պահանջը:

ՀԱՎԵԼՎԱԾ №10

ԼՈՒՍԱՆԿԱՐԱՀԱՆՈՒՄԸ ԵՎ ՏԵՍԱՆԿԱՐԱՀԱՆՈՒՄԸ ԸՆՏՐԱԿԱՆ ՏԵՂԱՍՏԱՍՈՒՄ

(Պատրաստվել է Վրաստանի Կենտրոնական ընտրական հանձնաժողովի 2012 թվականի սեպտեմբերի 24-ի №42/2012 որոշման համաձայն)

Քվեարկության օրը, ընտրական տեղամասը բացվելուց (առավոտյան ժամը 7:00) մինչև տեղամասային ընտրական հանձնաժողովի կողմից քվեարկության արդյունքների ամփոփիչ արձանագրությունները կազմելն ընկած ժամանակամիջոցը ներառյալ

Քվեարկության գաղտնիության ապահովման նպատակով թույլ չի տրվում.

- ▶ լուսանկարել և տեսանկարել քվեախցիկը, որպեսզի հայտնի չդառնա ընտրողի ընտրությունը,
- ▶ նկարահանել ընտրողների ցուցակների ընտրական հանձնաժողովի համար հատկացված (սեղանի) տարբերակը և այլ այնպիսի տեղեկատվություն կամ նյութ, որը Վրաստանի Ընտրական օրենսդրությամբ չի պատկանում հանրային տեղեկատվությունների թվին:

Քվեարկության գործընթացի անխափան ընթացքի ապահովման նպատակով.

- ▶ քվեարկության շենքում գտնվելու իրավունք ունեցող անձանց հետ հարցազրույցը ձայնագրել թույլ է տրվում միայն քվեարկության շենքից դուրս,
- ▶ ընտրական հանձնաժողովի անդամները հարցազրույց պետք է տան առանց քվեարկության գործընթացում իրենց պարտականությունների կատարմանը խոչընդոտելու:

Քվեարկության շենքում գտնվելու իրավունք ունեն.

- ▶ ընտրողը՝ քվեարկելու համար անհրաժեշտ ժամանակի ընթացքում,
- ▶ տեղամասային ընտրական հանձնաժողովի անդամները և վերադաս ընտրական հանձնաժողովի անդամները/ներկայացուցիչները,
- ▶ ընտրական սուբյեկտների ներկայացուցիչները (մինչև ընտրական սուբյեկտի ոչ ավելի, քան 1 ներկայացուցիչ),

- ▶ լրատվամիջոցների հավատարմագրված ներկայացուցիչները (մամուլի և զանգվածային լրատվության միևնույն միջոցի ոչ ավելի, քան 3 ներկայացուցիչ),
- ▶ գրանցված տեղական դիտորդ կազմակերպության դիտորդները (միևնույն տեղական դիտորդ կազմակերպության ոչ ավելի, քան 1 դիտորդ),
- ▶ գրանցված միջազգային կազմակերպության դիտորդները (միևնույն միջազգային կազմակերպության ոչ ավելի, քան 2 դիտորդ) (նրանց հետ կարող է լինել թարգմանիչ):

II

Քվեարկության օրը առավոտյան ժամը 7-ից մինչև ընտրական տեղամաս առաջին ընտրողի գալը և ընտրատեղամասում վերջին ընտրողի քվեարկությանը հաջորդող ժամանակամիջոցից քվեարկության արդյունքների ամփոփիչ արձանագրությունները կազմելու ժամանակամիջոցը ներառյալ

Ընտրական գործընթացի թափանցիկության ապահովման նպատակով.

Քվեարկության շենքում գտնվելու իրավունք ունեցող անձինք կարող են լուսանկարահանում և տեսանկարահանում իրականացնել տեղամասային ընտրական հանձնաժողովի նախագահի կողմից հատուկ տրամադրված տեղից, նկարահանման սուբյեկտից/օբյեկտից ոչ պակաս, քան **3 մետր** հեռավորությունից, որտեղից երևում է ընտրական գործընթացը:

քվեարկության շենքը չի տալիս 3-մետրանոց տարածության պահպանման հնարավորություն, նկարահանման տեղը սահմանում է տեղամասային ընտրական հանձնաժողովի նախագահը:

III

Քվեարկության օրը ընտրական տեղամաս առաջին ընտրողի գալուց մինչև վերջին ընտրողի կողմից ձայն տալն ընկած ժամանակահատվածում

Ընտրական գործընթացի թափանցիկության ապահովման նպատակով.

- ▶ Քվեարկության շենքում գտնվելու իրավունք ունեցող անձինք կարող են առանց խոչընդոտի նկարահանել ընտրական տեղամասերում քվեարկության գործընթացն այն ժամանակահատվածում, երբ ձայն են տալիս Բարձր հասարակական հետաքրքրություն վայելող ընտրողները (քաղաքական պաշտոնեական անձինք, ընտրական սուբյեկտների և քաղաքական միավորումների ղեկավարները, կրոնական առաջնորդները), որից հետո լուսանկարող և տեսանկարող սարքերը պետք է դուրս տարվեն քվեարկության շենքից:
- ▶ Մամուլի և զանգվածային այլ լրատվության միևնույն միջոցն իրավունք ունի ընտրական տեղամասում քվեարկության գործընթացի ժամանակ լուսանկարահանում և տեսանկարահանում կատարել մեկ անգամ, ոչ ավելի, քան 10 րոպե, ցանկացած տեղից, քվեարկության գաղտնիության ապահովմամբ:

- Քվեարկության շենքում գտնվելու իրավունք ունեցող անձինք (այդ թվում լրատվամիջոցների ներկայացուցիչները, որոնք ցանկանում են լուսանկարում և տեսանկարահանում իրականացնել 10 ռոպեից ավել ժամանակահատվածի ընթացքում) կարող են քվեարկության օրը ամբողջ օրվա ընթացքում լուսանկարահանում և տեսանկարահանում իրականացնել տեղամասային ընտրական հանձնաժողովի նախագահի կողմից հատուկ առանձնացված տեղում տեղադրված ստացիոնար ֆոտոտեսանկարահանող սարքի միջոցով: Այս տեղից պետք է երևա ընտրական քվեատուփը:

ԱՐՁԱԳԱՆՔ ԽԱԽՏՈՒՄՆԵՐԻՆ

Լուսանկարահանում և տեսանկարահանում իրականացնելու կանոնները խախտելու դեպքում, տեղամասային ընտրական հանձնաժողովը ձայների մեծամասնությամբ որոշում է կայացնում՝ համապատասխան անձին քվեարկության շենքից վտարելու մասին:

This image shows a single sheet of white paper with horizontal ruling lines. The lines are evenly spaced and run across the width of the page. There are no margins, text, or other markings on the paper.

This image shows a single sheet of white paper with horizontal ruling lines. The lines are evenly spaced and run across the width of the page. There are no margins, text, or other markings on the paper.

[illegible]

[illegible]

This image shows a single sheet of white paper with horizontal ruling lines. The lines are evenly spaced and run across the width of the page. There are no margins, text, or other markings on the paper.